

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ ԱՆԿԱՐԵԼԻՆ ԴԱՐԾԱԼ ԿԱՐԵԼԻ

Անհաւատալի, քաղաքական երկրաշարժ, վտանգաւոր, Ամերիկեան կայսրութեան անկման սկիզբ ու տակաւին բազմաթիւ այլ բառերով կը բնութագրուի Տաճարաւոր թրամփի անակնկալ յաղթանակը Ամերիկայի նախագահական ընտրութիւններուն:

Տաճարաւոր թրամփի քաղաքական դաշտ մուտք գործելով խախտեց ցարդ ընդունուած բոլոր չափանիշերը: Վիրաւորական արտայայտութիւններով հանդէս եկաւ ժողովուրդի տարբեր խաւերուն դէմ, իր արտասանած խօսքերուն մեծ մասը նկատուեցաւ բացայայտօրէն սուտ, տոււաւ անիրականացանքի խոստումներ, ցուցաբերեց անբարոյականութեան յատկանիշեր ու հակառակ այս բոլորին ան կարողացաւ իր շուրջ համախմբել դժգոհներու մեծ զանգուած մը, որոնք հաւատարիմ մնալով իրեն՝ ճամբայ բացին դէպի Սպիտակ Տուն:

Առիթով մը թրամփի յայտարարեց՝ «Կրնամ կենալ Նիւ Եորքի 5-րդ պողոտային վրայ, կրակել եւ մարդ սպաննել ու տակաւին իմ համակիրները պատրաստ են քուէտրակելու ինձի»: Այդպէս ալ եղաւ, ցնցելով ոչ միայն Ամերիկեան, այլ նաեւ՝ ամբողջ աշխարհը:

Յառաջիկայ օրերը պիտի քան ցոյց տալու թէ, որքանով ան պիտի կարողանայ իրագործել այն խոստումները, որոնց վրայ կառուցած էր նախընտրական արշաւը: Մեքսիքոյի հետ սահմանի երկարութեան հսկայ պատի մը կառուցումը ու Մեքսիքոյին ստիպելով որ վճարէ միլիարդաւոր տոլարի ծախսերը, աւելի քան 11 միլիոն ապօրէն գաղթականներու արտաքսումը, Իսլամներու Ամերիկա մուտքը արգիլելը, արտաքին քաղաքականութեան վերանայումը, գումարած՝ ժողովուրդի տնտեսական վիճակի շուտափոյթ բարելաւումը կը սպասեն իրականացումի:

Ինչ կը վերաբերի հայութիւնը յուզող հարցերուն, դժուար թէ ան հետաքրքրութիւն ցոյց տայ այդ ուղղութեամբ: Հաւանաբար ան նոյնիսկ անտեղեակ է, թէ քարտէսի վրայ ո՞ր կը գտնուի Հայաստանը:

Մտահոգիչ է նաեւ այն պարագան, որ Տոնալտ թրամփի ունեցած տնտեսական կապերը Ատրպէյճանի եւ Թուրքիոյ մէջ, կրնան ազդել Արցախի հարցով նոր վարչակազմի դիրքորոշումներուն վրայ:

Վերջապէս, պէտք չէ զարմանալ, երբ յառաջիկայ Ապրիլ 24-ին, Սպիտակ Տունը դադարի հանդէս գալ պաշտօնական յայտարարութիւններով:

Մաղթեմք որ մեր այս կանխատեսումները սխալ դուրս կու գան: Կ'ապրինք կը տեսնենք:

«ՄԱՍԻՍ»

## Տոնալտ թրամփի Ընտրուեցաւ Ամերիկայի 45-րդ Նախագահ

Նոյեմբեր 8-ին, Ամերիկայի տարածքին կայացած ընտրութիւններու ընթացքին արձանագրուեցաւ պատմական մաշտապի անակնկալ եւ Հանրապետական կուսակցութեան թեկնածու Տոնալտ թրամփի ընտրուեցաւ Միացեալ Նահանգներու 45-րդ նախագահ: Թրամփի յաղթանակը ապահովեց երբ կարողացաւ չկանխատեսուած արդիւնքներ արձանագրել շարք մը նահանգներու մէջ, որոնք ցարդ կը նկատուէին ապահով «Դեմոկրատ նահանգներ» ու տիրանալով անհրաժեշտ 270 ընտրական ձայներէն աւելին, հասաւ յաղթանակի, հակառակ որ ժողովրդային ընդհանուր քուէներով Հիլըրի Կլինթըն ունի առնուազն երկու հարիւր հազար ձայն աւելի:

Չորեքշաբթի առաւօտեան կանուխ ժամերուն Տիւ. Բլինթըն հեռաձայնելով թրամփին շնորհաւորեց զինք՝ յաղթանակին առթիւ: Նոյնը ըրաւ նաեւ նախագահ Պարք Օպամա, պատրաստակամութիւն յայտնելով գործակցելու ընտրեալ նախագահին հետ, իշխանութեան սահուն փոխանցում կատարելու համար:

Տոնալտ թրամփի իր յաղթանակի ելոյթին մէջ ինք եւս միասնականութեան կոչ ըրաւ, խոստանալով դառնալ բոլոր Ամերիկացիներու նախագահը:

Հրապարակուած արդիւնքները եկան ցոյց տալու նաեւ, որ Հանրապետական կուսակցութիւնը պիտի պահէ իր մեծամասնութիւնը Գոնկընթէյններս, այսպիսով իր ձեռքերուն մէջ ունենալով ոչ



Ընտրեալ նախագահ Տոնալտ թրամփ

միայն նախագահութիւնը, այլ նաեւ Ծերակոյտը եւ Ներկայացուցիչներու Տունը:

Նոյն օրը տեղի ունեցած այլ ընտրութիւններու ընթացքին, հայ թեկնածուներէն ոմանք հասան չափորոշեան, սակայն ուրիշներ՝ ոչ: Քալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանի ընտրութիւններուն Արտաշէս Քասախեան պարտութիւն կրեց Կլէյտէյի քաղաքապետութեան անդամ Լորա Ֆրիտմընի դիմաց: Ատրին Նազարեան վերընտրուեցաւ Նահանգային Խորհրդարանի անդամ:

Նեւտա նահանգին մէջ Ներկայացուցիչներու Տան անդամութեան թեկնածու՝ Հանրապետական Տէնի Թարքանեան ձայներու չնչին տարբերութեամբ պարտութիւն կրեց Դեմոկրատ իր մրցակիցին դիմաց:

## Նալպանտեան Կ'ահագանգէ Ատրպէյճանի Նոր Յարձակման Հնարաւորութեան Մասին

Հայաստանի արտգործնախարարի խօսքով, յառաջիկայ գորավարժութիւններուն ընդհանուած է «ատրպէյճանական բանակի գրեթէ ողջ ներուժը»: Այս մասին, յայտարարեց Հայաստանի արտգործնախարար Էտուարտ Նալպանտեանը, շարունակելով՝ «60 հազարանոց զօրք, թանկեր, հրթիռներ եւ այլն: Դա նաեւ Վիեննայի փաստաթղթի խախտում է, որի համաձայն պէտք է իրենք 42 օր առաջ տեղեակ պահէին, եթէ նոյնիսկ 9000-ի է հասնում զօրքի մասնակցութիւնը: Բայց խօսում են 60 հազարի մասին... ոչ միայն տեղեակ չեն պահել, այլ նաեւ Համպուրկից առաջ գնում են այսպիսի քայլի, որն, իհարկ է, սրում է իրավիճակը, բացի այն, որ իհարկէ, սաստկացրել են խախտումները հրադադարի թէ՛ շփման գծում, եւ թէ՛ ընդհանրապէս հակամարտութեան գոտում»:

Համպուրկի մէջ, 8-9 Դեկտեմբերի նախատեսուած է եԱՀԿ նախարարական խորհուրդի տարեկան հան-

դիպումը, որուն ընթացքին, ըստ Մինսկի խումբի ամերիկացի համանախագահ ճէյմս Ուորլիքի նախատեսուած է նաեւ Հայաստանի եւ Ատրպէյճանի արտգործնախարարներու հանդիպում: Սակայն, այսօր Նալպանտեանը նշեց. «Տեսնենք, թէ ինչ զարգացումներ կը լինեն եւ տեսնենք, թէ ինչպիսին կը լինեն առաջարկները... բայց մի բանում վստահ եմ՝ եռանախագահների հետ հանդիպումներ լինելու են»:

«Ոմանք, ովքեր կասկածներ ունէին, որ Ատրպէյճանը կարող է գնալ իրավիճակի կտրուկ սրման, յստակ ապացոյցներ ստացան ապրիլի սկզբին՝ Ատրպէյճանի սանձազերծած այդ լայնածաւալ ռազմական գործողութիւնների տեսքով, եւ ապրիլեանա կրեսիայից յետոյ եռանախագահների ջանքերը, Հայաստանի հետ միասին, ուղղուած են այն բանին, որ համապատասխան պայմաններ ստեղծուեն, որպէսզի հիմնախնդրի կարգաւորման գործընթացն առաջ մղուի», - ըսաւ Էտուարտ Նալպանտեանը:

## Կարո Փայլան Կ'ահագանգէ՝ Կը վերապրինք 1915-ի Ապրիլի 24-ը



Թուրքիոյ խորհրդարանի անդամ Կարո Փայլան

«Թուրքիոյ մէջ հիմա մենք կը վերապրինք 1915-ի Ապրիլի 24-ը: Թոյլ չենք տար ֆաշիստներուն կրկին կործանել մեր երկիրը ու մեր երիտասարդութիւնը», - Թուրքիոյ իր էջին վրայ նման գրառում կատարած է Թուրքիոյ խորհրդարանի եզակի հայ պատգամաւորներէն Կարո Փայլանը:

Անցեալ շաբաթավերջին Փայլանի կուսակիցները՝ քիւրտերու ու Թուրքիոյ եւ այլ փոքրամասնութիւններու իրաւունքներուն համար պայքարող ժողովուրդներու Դեմոկրատական կուսակցութեան համանախագահներն ու պատգամաւորները ձերբակալուեցան ու անոնց մեղադրանք ներկայացուեցաւ ահաբեկչութեան նպատակով եւ Քրտական Աշխատաւորական կուսակցութեան սատարելու համար:

Կարո Փայլանի Մարտէջ մէջ նախատեսուած ելոյթը վերջին պահուն չետաձգուելէ ետք, որոշ տեղեկութիւններ տարածուեցան թէ, էրտողանի վարչակազմը ընդդիմութեան դէմ սկսած արշաւի շրջագիծէն ներս արգիլած է նաեւ Փայլանի ազատ տեղաշարժելու իրաւունքը: Սակայն, Փայլան համացանցի միջոցաւ տեղեկացուց, թէ երկրէն չբացակայելու որոշումը կայացուցած է ինքը, քանի որ հիմա ներսը իր կարիքը աւելի կայ:

«Այս ժողովրդավարութեան վերջն է Թուրքիոյ մէջ», - յայտարարեց նաեւ Մեծիսի մեծութեամբ երկրորդ ընդդիմադիր ուժը՝ սանցնելով իր մասնակցութիւնը խորհրդարանի աշխատանքներուն:

«Այս եղածը Թուրքիոյ ժողովրդավարութեան պատմութեան մէջ արձանագրուած ամենակոշտ եւ մուսլ յարձակումն է», - պնդեց ընդդիմադիր կուսակցութեան խօսնակ Այհան Պիլկելը:

Յուլիսեան յեղաշրջման փորձէն յետոյ, էրտողանի վարչակազմը ազատագրեց կամ պաշտօնանկ ըրաւ աւելի քան 110 հազար ընդդիմադիրներ:

# Կարէն Կարապետեանը Սկսել է Կասկածել Սերժ Սարգսեանին

## ԱՐԱՍ ԱՍՏՆՈՒՆԻ

Վարչապետ Կարէն Կարապետեանը անդրադառնալով խորհրդարանական ընտրութիւններից յետոյ իր պաշտօնավարման հարցին, արեւ է հետաքրքրական յայտարարութիւն: Նա նշել է, որ կոռեկտ չի համարում խօսել այդ մասին: Միաժամանակ Կարապետեանը նշել է, որ միշտ անկեղծ է իր յայտարարութիւններում եւ երբեք սուտ չի խօսում: Նա այդ մասով նշել է, որ ինքը չի երազել լինել վարչապետ, սակայն մտահոգ է տնտեսութեան ապագայի համար:

Կարապետեանի յայտարարութիւնը, թէ ինքը սուտ չի խօսում, բաւական խորիմաստ է այն համատեքստում, որում հնչում է: Այն հնչում է խորհրդարանական ընտրութիւններից յետոյ իր վարչապետական հեռանկարի համատեքստում: Մի բան, որը կրկնակի ուշադրաւ է հնչում խորհրդարանական ընտրութիւններից յետոյ վարչապետական հեռանկարի մասին Սերժ Սարգսեանի յայտնի յայտարարութեան ֆոնին, որ նա արել էր «Ալ ձագիրա» արաբական հեռուստաընկերութեանը: Սերժ Սարգսեանը, ինչպէս յայտնի է, նշել էր, որ իր վարչապետական հեռանկարների մասին խօսելը դեռ վաղ է, քանի որ դա կախուած է խորհրդարանական ընտրութիւններից, եւ դրա համար իր կուսակցութիւնը պէտք է «շատ լաւ քուէ ստանայ»:

Չբացառել սեփական վարչապետական հեռանկարը, պայմանաւորել այն խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքով, ըստ էութեան, նշանակում է չբացառել նաեւ Կարէն Կարապետեանի վարչապետական հեռանկարի ընդհատումը, վարչապետական գործունէութեան արգելակումը:

Ահա այս գուզահեռի պայմաններում Կարէն Կարապետեանի

յայտարարութիւնը, թէ ինքը սուտ չի խօսում, վարչապետական հեռանկարի համատեքստում հնչում է բաւականին բազմիմաստ եւ զգալիօրէն շօշափուում է դրանում առկայ ակնարկը Սերժ Սարգսեանի հասցէին, յատկապէս, երբ Կարապետեանը չի նշեցնում է, որ չի երազել վարչապետ դառնալու մասին:

Այդպիսով Կարապետեանը, կարծես թէ, ակնարկում է, որ խորհրդարանական ընտրութիւններից յետոյ իր հեռանկարը կախուած է նրանից, թէ ինչքանով է իր հետ անկեղծ Սերժ Սարգսեանը, որի հետ Կարապետեանը քննարկել է վարչապետ դառնալու հարցն ու համաձայնել: Եւ բացառուած չէ, որ այդ քննարկումներում Սերժ Սարգսեանը բացառել է նախագահական պաշտօնից յետոյ վարչապետի պաշտօնում մնալու հնարաւորութիւնը:

Խնդիրն այն է, որ ինչքան էլ արդիւնաւէտ աշխատի Կարէն Կարապետեանը, նա չի կարող մէկերկու տարում արձանագրել շօշափելի էֆեկտ համակարգային փոփոխութիւնների իմաստով, նա չի կարող դա անել մի շարք օբիեկտիւ եւ սուբիեկտիւ լուրջ պատճառներից ելնելով: Եւ ուրեմն պէտք է ենթադրել, որ նա համաձայնել է իր պաշտօնին այն պայմանով, որ Սերժ Սարգսեանը նախագահական պաշտօնը թողնելուց յետոյ չի գնայ վարչապետի պաշտօնին:

Կարէն Կարապետեանը բաւականին թափանցիկ կերպով ակնարկում է, որ ինքը չի ստում, բայց կարող է իրեն ստել Սերժ Սարգսեանը, եւ վարչապետական հեռանկարը կախուած է ոչ թէ իր, այլ Սերժ Սարգսեանի անկեղծութիւնից, որի վերաբերեալ Կարապետեանի մօտ, ըստ ամենայնի, կասկածներ է առաջացրել արաբական ալիքին տուած Սարգսեանի հարցազրոյցը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

# Առանց Անմեղութեան Կանխավարկածի

## ԱՐԱՍ ԱԲՐԱՅԱՍԵԱՆ

Եթէ որեւէ մէկը ինձ, ենթադրեմք, մեղադրում է, որ ես շուկայից խնձորներ եմ գողանում, ապա ես բացարձակապէս պարտաւոր չեմ ապացուցել, որ նման «սեւ գործերով» չեմ զբաղում: Իմ մեղքն ապացուցելու բեռն ամբողջապէս ընկնում է մեղադրանքն առաջ քաշողի վրայ: Դա կոչուում է «անմեղութեան կանխավարկած»:

Փամանակին պատգամաւորներից մէկն ասել է, որ ընդդիմադիրները «ատրպէյճանական լրտեսներ» են եւ աւելացրել է՝ եթէ այդ մեղադրանքի հետ համաձայն չեն, ապա թող ատրպէյճանական յատուկ ծառայութիւններից տեղեկանք բերեն, որ իրենք լրտես չեն: Իրականում ինքը՝ պատգամաւորը պէտք է տեղեկանք կամ այլ փաստարկ բերի՝ ապացուցելու համար, թէ իր ընդդիմախօսները կատարել են այդ սարսափելի յանցագործութիւնը:

Պետական պաշտօնեայի վրայ, իմ կարծիքով, չպիտի տարածուի անմեղութեան կանխավարկածի սկզբունքը այն դէպքում, եթէ կասկած կայ, որ նա ապրում է շատ աւելի ճոխ, քան թոյլ են տալիս իր

օրինական եկամուտները: Այդ դէպքում ինքը պիտի ապացուցի, որ իր «ճոխութեան աղբիւրներն» օրինական են: Դրա համար գոյուլութիւն ունի ՄԱԿ-ի համապատասխան կոնվենցիան «Կոռուպցիայի դէմ պայքարի մասին», որի 20-րդ յօդուածով անօրինական հարստացումը բրէպանակարէն է: Պէտք է ասել, որ Արեւմտեան Եւրոպայի հիմնական երկրները եւ Միացեալ Նահանգներն իրենց Քրէպանակարէն օրէնսգրքում նման յօդուած չունեն, իսկ Գերմանիան, Չեխիան, Նոր Զելանդիան եւ Ճաբոնիան ընդհանրապէս չեն վաւերացրել վերոյիշեալ կոնվենցիան: Պատճառը պարզ է. այդ պետութիւններին որպէս կանոն յաջողում է «բռնացնել» կոռուպցիոն պաշտօնեաներին աւելի վաղ փուլերում: Բայց մեր նման երկրներում մենք գործ ունենք արդէն կայացած փաստի հետ՝ ենթադրեմք, 400 հազար դրամ աշխատավարձ ստացող պաշտօնեան կառուցել է մէկ միլիոն տոլարանոց դղեակ, եւ նրան պէտք է «բռնացնել» արդէն այդ փաստի վրայ:

Դա հեշտ գործ չէ. եթէ նման հարց ծագի, պաշտօնեան կարող է դիմել իր պիզնեսմեն ընկերոջն ու

# Կեղծ Միաւորումների Մարտավարութիւնը

## ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Ընտրութիւններից առաջ ընդդիմադիր ուժերի միաւորման մասին խօսակցութիւնները դարձեալ աշխուժացել են: Սա սովորական երեւոյթ է, բայց քանի որ այս տարի պոտենցիալ «միաւորուողները» թիւն անհամեմատ աւելի մեծ է՝ գործընթացն էլ, համապատասխանաբար, անհամեմատ աւելի ծիծաղելի է ստացւում:

Ծիծաղելին առաջին հերթին այն լրջութիւնն է, որով տարբեր «ընդդիմադիր ուժերի» ղեկավարներ յայտարարում են, թէ համագործակցութեան մասին խօսելը դեռ վաղ է, բայց քննարկումները շարունակուում են, եւ եթէ առաջարկներ լինեն՝ իրենք կը քննարկեն, կ'ուսումնասիրեն այլ «ուժերի» ծրագրերը, եւ եթէ դրանք համապատասխանեն... Մի խօսքով՝ հասկացաք. իրենց ծանր են պահում: Եւ այնքան լուրջ, որ լսողները կարծեն, թէ սրանք իսկապէս ընդդիմադիր են, եւ՝ իսկապէս ուժ:

Կոմիզմի գագաթնակէտն, իհարկէ, «ծրագրերն ուսումնասիրելու» դրուագն է, որովհետեւ «կակուազ» ծրագրերն ուսումնասիրելու կարիք չկայ. բոլոր կուսակցութիւններինը մօտաւորապէս նոյնն են: Բոլորի ծրագրերն էլ ենթադրում են պետութեան զարգացում, կոռուպցիայի եւ ստուերի դէմ պայքար, ժողովրդավարութեան ամրապնդում, բնակչութեան կենսամակարդակի կտրուկ աճ, դարբան խնդրի խաղաղ կարգաւորում՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի հիման վրայ եւ այլն: Բայց սա, իհարկէ, չի նշանակում, թէ «ընդդիմադիր ուժերի» միջեւ քննարկումները ձեւական են, եւ ընդդիմութիւնը չի միաւորուի: Իհարկէ կը միաւորուի: Մի քանի միաւորումների մէջ: Որովհետեւ դրանցից իւրաքանչիւրն այնքան փոքր է, որ ինքն իրենով չի կարող իշխանութիւնների ուշադրութեանն արժանանալ եւ փորձել քաղաքական համակարգի խաղաղ դառնալ՝ թէկուզ ընդդիմադիր «մարզաշապիկով»: Իսկ եթէ մանր-մունրներով միաւորուեն՝

հետին թուով իբր «պարտք վերցնել» պահանջուող գումարը: Նա կարող է իր դղեակը գրանցել որեւէ բարեկամի անունով, իսկ յետոյ, երբ աղմուկի անցնի, նոյն դղեակը «նուէր ստանալ» իր այդ բարեկամից: Վերջապէս, կարող է ասել, որ յաջող խաղաղույթ է կատարել խաղատանը: Եւ այլն: Դրա համար էլ նախատեսուում է անօրինական հարստացմանը զուգահեռ ընդլայնել յայտարարագիրներ կայացնող պաշտօնեաների հետ կապակցուած անձանց ցանկը, ինչպէս նաեւ բացառել կանխիկ գումարներով որոշ գործարքներ: Իհարկէ, այդ ամենով հանդերձ հնարաւոր է, որ աղմուկի առկայութեան դէպքում իրաւապահները յայտարարեն, որ զբաղուելու են այդ գործով, կաշառակեր պաշտօնեան կը գնայ կաշառակեր քննիչի մօտ, նրանք լեզու կը գտնեն եւ ամէն ինչ դրանով կ'աւարտուի: Դրանից խուսափելու համար պէտք են փոխադրուած վերահսկողական մեխանիզմներ: Բայց դա արդէն այլ խօսակցութեան թեմա է:

«ԱՌԱՒՕՏ»

գուցէ ինչ-որ բան ստացուի: Իսկ հիմա փորձենք այս ամէնին նայել շարքային քաղաքացիների տեսանկիւնից: «Ընդդիմադիր ուժերի» ղեկավարների համար լաւ է. տարբեր սրճարաններում նստած՝ հնարաւոր դաշինքների վերաբերեալ բանակցութիւններ են վարում, հարցազրոյցներ են տալիս, կարեւոր մտքեր են յայտնում, մի խօսքով՝ իրենց վատ չեն զգում:

Խնդիրն այն չէ՝ ընդդիմադիր քաղաքական ուժերը պիտի միաւորուե՞ն, թէ ոչ: Խնդիրն այն է, որ նման հարցադրումը տեղին է միայն այն դէպքում, եթէ այդպիսի ուժեր գոյութիւն ունեն: Ցաւօք՝ Հայաստանում եղածները կամ ընդդիմադիր չեն, կամ քաղաքական չեն, կամ ուժ չեն: Իսկ այդ իրավիճակում հասարակութիւնը երկու տարբերակ ունի. կամ գնալ ուժի հետեւից՝ յոյս ունենալով, որ նրան կը դարձնի քաղաքական ընդդիմութիւն, կամ գնալ քաղաքական ընդդիմութեան հետեւից՝ նրան դարձնելով ուժեղ:

Մի խօսքով՝ հիբրիդային միաւորումները «սերունդ չեն տալիս»: Եթէ, ասենք, գուտ քաղաքական կառուցը միաւորում է հզօր, բայց՝ ոչ քաղաքական կառուցի հետ, ոչինչ չի ստացւում: «Ուժերը» թող «ուժերի» հետ միաւորուեն, քաղաքական կառուցները՝ քաղաքական կառուցների հետ (եթէ ստացուի): Ու թող հասարակութիւնը որոշի՝ ուժի՞ հետեւից է գնում, թէ՞ գնում է «ուժի» դէմ պայքարողներին ուժեղացնելու:

Իսկ «միաւորման շուրջ քննարկումների փուլում գտնուող» մանր-մունր կառուցների վրայ ուշադրութիւն չեղելու կարիք հաստատ չկայ: **ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ**



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ԱՌՅԻԱԿ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆՉԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
 ՎԱՅԷԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
 USA \$50.00, \$100.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$250.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վարչապետը Յանձնարարեց Նախապատրաստել Ապօրինի Հարստացումը Քրեականացնող Օրենքի Նախագիծ

«Պաշտօնեան պէտք է ենթարկուի քրեական պատասխանատուութեան, եթէ նրա ակտիւնների աճը հակասորէն գերազանցում է նրա եկամուտները», - կառավարութեան նիստի օրակարգին անցնելէ առաջ յայտարարեց վարչապետ Կարապետեանը՝ հնչեցնելով շարք մը յանձնարարականներ:



Յայաստանի Վարչապետ Կարէն Կարապետեան

Ապօրինի հարստացման դէմ կատարուելիք քայլերը, ըստ վարչապետի, կը բխին կառավարութեան ծրագրէն ու կաշառակերութեան դէմ պայքարելու մասին տրուած խոստումներէն. «Յանձնարարում եմ ՀՀ արդարադատութեան նախարարին երկշաբաթեայ ժամկէտում նախագիծը ներկայացնել կառավարութեանը: Խօսքը գնում է ապօրինի հարստացման քրեականացման նախագծի մասին: Երկրորդը, ապօրինի հարստացման քրեականացման նախագծի հետ անհրաժեշտ է ներկայացնել կանխիկ գործառնութիւնները սահմանափակող օրէնքի նախագիծ: Այսպէս կոչուած կեղծ փոխառութիւնները, կեղծ նուիրատուութիւնները հիմնականում կատարուած են կանխիկ եղանակով, եւ գործընթացը դարձնում են սկզբունքորէն անվերահսկելի»:

Կարապետեանը անհրաժեշտ կը համարէ նաեւ ընդլայնել ունեցումների վերաբերեալ յայտարարագիրը ներկայացնող անձանց շրջանակը՝ ըստ այդ պաշտօններու վտանգութեան:

Կիւմրիի «Ասպարէզ» ակումբի ղեկավար Լեւոն Բարսեղեանը կը յիշեցնէ, որ տասնեակ առաջարկներ տարած էին կառավարութիւն, որոնք այդպէս ալ մնացած են թուղթի վրայ: Ներկայացուած առաջարկներէն էին, օրինակ, փոխել հակակաշառակեր յանձնաժողովի կազմը՝ այնպէս ընդգրկելով հանրութեան համար վտանգելի անձանց, ստեղծել կաշառակերութեան վերաբերեալ յստակ քննչական լիազօրութիւններ ունեցող մարմին, քանի որ, ըստ Բարսեղեանի, կաշառակերութեամբ արդէն թափա-

ռուած իրաւապահները չեն կրնար կատարել այդ գործառնութիւնը:

Այնուամենայնիւ, անոր կարծիքով, եթէ նոյնիսկ այս կառավարութիւնը փորձէ իսկապէս խօսքէն գործի անցնել, հեռու չի կրնար երթալ. «Առաջին, երկրորդ կոչո շարժումից յետոյ ասելու են՝ մի րոպէ, եղբայր, էս ախպերը մեզ պաշտպանել է ընտրակեղծիքներ անելիս, ցուցարար ծեծելիս, էս մարդուն դու էս ի՞նչ ես անում, մի քիչ մեղմ վերաբերուէք. Լաւագոյն դէպքում կարող են ինչ-ինչ պաշտօնեաների պաշտօնանկումներ լինել, եւ վերջ»:

Կաշառակերութեան վերաբերեալ տասնեակ հետաքննութիւններ իրականացուցած «Հետք» պարբերականի գլխավոր խմբագիր Էտիկ Պաղտասարեանը եւս մեծ յոյսեր չի կապեր նոր կառավարութեան վճռակաշառակեան հետ: Ան յիշեցուց, որ 2012-ին կաշառակերութեան դէմ պայքարի մասին Սերժ Սարգսեանը կը խօսէր, 2015-ին՝ Յովիկ Աբրահամեանը, հիմա ալ՝ Կարէն Կարապետեանը:

Էտիկ Պաղտասարեանը նկատեց, որ վարչապետի հնչեցուցած յանձնարարութիւններուն մէջ ոչինչ չկար պաշտօնեաներու արտասահման կուտակած ունեցուածքը յայտարարագրելու մասին, ինչպէս նաեւ կեղծ յայտարարագիրներ կայացուցուած պաշտօնեաներուն պատժելու մասին:

Թէեւ օրէնսդրական փոփոխութիւնները անհրաժեշտ են, այնուամենայնիւ, ըստ անոր, եթէ եղած օրէնքները այս տեսքով գործերուն, Հայաստանի մէջ այսօր կաշառակերութիւնը այսպիսի խոր արմատներ չէր ունենար:

Սուրիահայերը կը Նախընտրելով Երեւանի Կեդրոնը

Հայաստան տեղափոխուած սուրիահայերը կը հրաժարին մարզերու բնակարաններէն՝ նախընտրելով Երեւանի կեդրոնը: Այս մասին յայտարարեց Սփիւռքի փոխնախարար Սերժ Սրապիտնեանը:

Անոր խօսքով Սփիւռքի նախարարութիւնը հանրապետութեան մարզերուն մէջ սուրիահայերուն բնակարաններով ապահովելու 160 առաջարկ ստացած է: Սուրիահայերը, ըստ փոխնախարարի, հիմնականին կը հրաժարին նման առաջարկներէ՝ պատճառաբանելով որ չեն կրնար այդքան հեռու տեղեր ապրիլ, քանի որ վարժ են քաղաքի կեանքին: «Պարոյր Սեւակի թանգարանի տնօրէնը մեզ պատմեց, որ ինքը երկյարկանի տուն

ունի կահաւորուած, որը պատրաստ են առանց որեւէ գումարի տրամադրել սիրիահայերի ընտանիքի: Եղել է նաեւ դէպք, երբ մարդը, աշխատելով իր մասնագիտութեամբ, կարող էր կրկնակի շատ աշխատավարձ ստանալ, բայց հրաժարուել է մարզ գնալ», - ըսաւ Սրապիտնեանը՝ աւելցնելով, որ շատ սուրիահայեր կ'ուզեն Երեւանի կեդրոն ապրիլ:

Սփիւռքի նախարարութիւնը, ըստ փոխնախարարի, գրեթէ ամէն օր կ'ընդունի սուրիահայերու ընտանիքներու, կ'օգնէ անոնց, կը տրամադրէ ժամանակաւոր բնակութեան վայրեր, յետոյ անոնց համար բնակարաններ կը փնտռէ ու կը փակէ վարձակալութեան վճարի մէկ մասը:

2016-ին Հայաստանի Պետական Պարտքը Ամէն Ամիս Աճած է 57 Միլիոն Տոլարով

Հայաստանի պետական պարտքը կը շարունակէ մեծ քայլերով աճիլ՝ միայն Օգոստոս-Սեպտեմբերին իշխանութիւնները իւրաքանչիւր ամսուան համար վերցուցած են աւելի քան 100 միլիոն տոլար պարտք:

Տնտեսութեան նախարարութեան հրապարակած վերջին տուեալներուն համաձայն, 2016-ի Սեպտեմբերին վերջը Հայաստանի պետական պարտքը կը կազմէր 5 միլիարդ 594 միլիոն տոլար կամ 514.7 միլիոն տոլարով աւելի նախորդ տարուան վերջին համեմատ:

Եթէ այդ աւելի քան կէս միլիարդ տոլար բաժնէնք անցեալինը ամիսներուն ի յայտ կու գայ, որ Հայաստանի քաղաքացիներու անունէն իշխանութիւնները իւրաքանչիւր ամիս միջինը վերցուցած են 57.1 միլիոն տոլար:

Այն, որ միայն պետական պարտքը աւելցնելու միջոցով իշխանութիւնները կրցած են դիմազրուել տնտեսական ցնցումներուն, ընդամենը երկու օր առաջ խոստովանեցաւ վարչապետ Կարէն Կարապետեանը, երբ խորհրդարանին մէջ կը ներկայացնէր 2017-ին պետական ելեւմտացոյցի նախագիծը:

Սակայն Կարապետեանի կառավարութեան նոյնպէս չի յաջողուիր առնուազն այս տարի կանգնեցնել պետական պարտքի նման սրընթաց աճը: Վերջերս լրագրողներու հետ հանդիպման տնտեսութեան նախարար Վարդան Արամեանը յայտարարեց, որ մինչեւ տարեվերջ Հայաստանի պետական պարտքը կը մօտենայ աննախադէպ՝ 6 միլիարդ տոլար սահմանագծին:

Հայաստանի Մէջ Աղքատութեան Մակարդակը Կազմած է 29.8 Տոկոս

2015-ին Հայաստանի մէջ աղքատութեան մակարդակը վիճակագրորէն չէ փոխուած: 2014-ի համեմատ ան նուազած է ընդամենը 0.2 տոկոսային կէտով եւ կազմած 29.8 տոկոս, այսինքն՝ երկրի իւրաքանչիւր 10 բնակիչէն մօտ 3-ը ամսական 41,698 դրամ վերին աղքատութեան գիծը չէ յաղթահարած: «Արմենպրէս»-ի հարրոյմամբ՝ այս մասին ըսաւ Ազգային վիճակագրական ծառայութեան (ԱՎԾ) տնային տնտեսութիւններու հետազօտութիւններու բաժնի պետ Տիանա Մարտիրոսովան՝ ներկայացնելով «Հայաստանի սոցիալական պատկերը եւ աղքատութիւնը» գեկոյցը:

2015-ին Հայաստանի աղքատութեան մակարդակը դեռ չէ

Հարցին, թէ արդեօք նման պարտքը վտանգաւոր չէ Հայաստանի տնտեսութեան համար եւ վտանգ չկայ, որ երկիրը կը յայտնուի սնանկացման եզրին, տնտեսութեան նախարարը արձագանքեց, «Տենց ռիսկ միշտ էլ ապագայում լինում է: Եթէ, օրինակ, ես 2017 թուականը տանէի մի հատ պիւտձէ, որը պակասուողի նուազում չի կանխատեսում, էդ ռիսկերը, ես կ'ասէի, աւելի են մեծանում»:

Շարունակաբար մեծցող պետական պարտքի վերաբերեալ վերջերս ահազանգ հնչեցուց նաեւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը՝ յայտարարելով, թէ մեր երկրին «մօտ ժամանակներս սպառնում է իրական տնտեսական աղէտ՝ այս անգամ թաքնուած ՏԵՖՈԼԴ «բարեհունչ» անուան տակ»:

Թէեւ արձագանքելով Տէր-Պետրոսեանի ահազանգին Կեդրոնական դրամատունը յայտարարեց, թէ «Հայաստանը կատարել եւ շարունակում է կատարել իր պարտաւորութիւնները առանց որեւէ խոչընդոտի եւ ապագայում չի նշմարուում որեւէ ռիսկ, որ Հայաստանը չի կարողանալ կատարել իր պարտաւորութիւնները», սակայն տնտեսագէտ Վահագն Խաչատրեանը «փակուղային» որակեց իշխանութիւններու առջեւ ստեղծուած իրավիճակը՝ նշելով, որ պետական ահազանցող պարտքի տակէն դուրս գալու համար պէտք է տնտեսութիւնը զարգացնեն, սակայն չեն ընել այդ, որովհետեւ տնտեսութեան ազատականացման, զարգացման մէջ սպառնալիք կը տեսնեն:

նուազած 2008-ի աղքատութեան մակարդակէն: Տարբերութիւնը 2.2 տոկոսային կէտ է, իսկ ծայրայեղ աղքատութեան՝ 0.4 տոկոսային կէտ: Ինչպէս ներկայացուց Մարտիրոսովան, 29.8% աղքատներու ընդհանուր թուաքանակի մէջ 8.4%-ը շատ աղքատ է, 2%-ը՝ ծայրայեղ աղքատ, մնացած 19.4%-ը՝ ուղղակի աղքատ:

«2015-ին աղքատների ընդհանուր թուաքանակը կազմել է մօտ 900 հազար մարդ՝ մշտական բնակչութեան ցուցանիշի հաշուով: Նրանցից շատ աղքատների թուաքանակը՝ ներառեալ ծայրայեղ աղքատները՝ մօտ 310 հազար, այդ թուում ծայրայեղ աղքատները՝ 60 հազար մարդ», - ըսաւ ան:

Հայաստանի Բնակչութեան Թիւը Արձանագրած է Նուազում

Հոկտեմբեր 1-ի դրութեամբ՝ Հայաստանի մէջ մնացու բնակչութեան թիւը կազմած է 2,993,900 մարդ. նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի համեմատ, ցուցանիշը նուազած է 10 հազարով:

Այս մասին լրագրողներուն յայտնած է Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայութեան մարդահամարի եւ ժողովրդագրութեան բաժնի պետ՝ Կարինէ Գուլումճեան:

Ան տեղեկացուցած է նաեւ, որ այս տարի սահմանային գրանցումներուն մէջ ելքերը գերազանցած են մուտքերուն, ուր մուտքերուն թիւը եղած է 2,075,877, իսկ ելքերունը՝ 2,162, 523:

Մարդահամարի եւ ժողովրդագրութեան բաժնի պետի համաձայն, քաղաքային բնակչութեան թիւը նուազած է 6300-ով, իսկ գիւղականինը՝ 3800-ով: Ան նաեւ նշած է, որ բնակչութեան աճը կազմած է 9400 մարդ:

# ԼՈՒՐԵՐ

## Նոր Սահմանադրութեամբ ԼՂՀ-ը Կրնայ Անուանուիլ Արցախի Հանրապետութիւն

Օրեր առաջ ԼՂՀ Աժ նախագահ Աշոտ Ղուկասը յայտարարեց, որ նոր Սահմանադրութեամբ կը ցանկան Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւն անուանումը փոխել Արցախի Հանրապետութեան:

Այս առնչութեամբ ԼՂՀ պատգամաւոր, արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Արզիկ Մխիթարեանի յայտնեց, որ արտաքին յարաբերութիւններու նիստին պատգամաւոր Ռուզիկ Հիւսնունցն ալ մէկ այլ առաջարկութեամբ հանդէս եկած է: Մասնաւորապէս, ան առաջարկած է անուանումը դարձնել Քրիստոնեական Արցախի Հանրապետութիւն: «Այն որպէս յայտարարութիւն ներկայացուել է նիստերից մէկի ժամանակ, դեռեւս քննարկումներ չեն եղել, որպէսզի ան կարողանամ սպառիչ պատասխանել: Դա սուպլեկտի կարծիք է եղել եւ անհրաժեշտութիւն կայ, որ ապագայում քննարկուի», - նշեց ան: Ներկայացնելով իր անձնական տեսակէտը, Մխիթարեան ընդգծեց, որ աշխարհի մէջ միայն իրանն է, որ հաւատքի անուանումով անուն ունի: «Կարծում եմ՝ անհրաժեշտութիւն չկայ, որ անպայման շեշտուի դա, բայց այն, որ Լեւոնային Ղարաբաղ անուանումը մի փոքր պարաօրքսալ է, որովհետեւ Ղարաբաղը ընդգրկում է ոչ միայն Լեւոնային Ղարաբաղը, այլ տափաստանային Ղարաբաղը, եւ բոլորը միասին կոչուում է Արցախ:

Այս իմաստով, իհարկէ, նպատակաշարժար է, որ մենք ունենանք Արցախի Հանրապետութիւն անուանումը, որը չի սահմանափակում այն գաղափարը, որ մենք միայն Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութիւնը ունենք»,- աւելցուց ան:

Ռուզիկ Հիւսնունցի նշեց, թէ չի կարծէր, որ իր այս առաջարկութիւնը ընդունուած է. «Մի քանի ամիս առաջ, երբ սահմանադրական փոփոխութիւնների աշխատանքային խումբը սկսեց աշխատել, այդ ժամանակ ներկայացրեցի առաջարկս: Դա համընկալ Հոռոմի Պապի այցելութեան ժամանակահատուածի հետ: Նրա այցելութիւնը Հայաստան առանձնապատուկ էր, քանի որ այց էր առաջին քրիստոնեական երկիր: Նոյնիսկ արձագանքներ եղել են եւրոպական երկրներից, բայց ինձ թւում է, որ մերոնք շատ խանդավառուած չեն, կամ այդ խնդրի լուծման հոլովութիւնը խորութեամբ չեն ըմբռնում», - նշեց ան: Հիւսնունցն ընդգծեց, որ այդ անուանափոխութեամբ կրնան շատերու ուշադրութիւնը սեւեռել իրենց վրայ: «Սա է իմ առաջարկը, եթէ չ'ընդունուի, նաեւ կողմ կը լինեմ Արցախի Հանրապետութիւն անուանը: Ճիշդն ասած, առաջին Սահմանադրութեան Արցախի Հանրապետութիւն անուան հեղինակն եմ: Այս անգամ էլ այս առաջարկութեամբ հանդէս եկայ», - աւելցուց ան:

## Ատրպէյճանը Նոր Սպառազինութիւն Զեռք Բերելու Ուղղութեամբ

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը, ինչպէս կը գրէ ուսաստանեան «Նեզավիսիմաեա կագեթան», բուռն բանակցութիւններ կը վարէ Փաքիստանի հետ 500 քիլոմետր հեռահարութեամբ հրթիռային համակարգեր ձեռք բերելու շուրջ:



Ատրպէյճանի հրթիռային եւ հրետանային զորքերու հրամանատար, կեներալ-մայոր Զահիտ Հուսէյնովը յայտարարած էր, թէ «երկրի յուսալի պաշտպանութեան համար անհրաժեշտ է ձեռք բերել 200, 300 եւ 500 քիլոմետր հեռահարութեամբ օպերատիւ-տակտիկական հրթիռներ» ընդգծելով. «Սա ամենեւին էլ չի նշանակում, որ հակառակորդի յարձակումները կասեցնելու համար անհրաժեշտ համակարգեր Ատրպէյճանն այսօր չունի: Ատրպէյճանն ունի բաւականաչափ սպառազինութիւն հակառակորդի ցանկացած օպերեթ խոցելու համար»:

Նոր հրթիռներ ձեռք բերելը Ատրպէյճանի համար արդիական դարձած է Հայաստանի անկախութեան տօնին նուիրուած գորահանդէսին ցուցադրուած ռուսաստանեան գերժամանակակից «Իսկանդեր» հրթիռային համակարգ:

Փաքիստանի հետ սպառազինութեան համատեղ արտադրութեան սկսելու մտադրութեան մասին պաշտօնական Պաքուն յայտարարած էր անցեալ տարուան մարտին, երբ Ատրպէյճան ժամանած էր Փաքիստանի վարչապետ Նաուազ Շարիֆը: Խոսքը Ատրպէյճանի ռազմարդիւնաբերական ոլորտ կէս միլիար տոլար ներդնելու Փաքիստանի մտադրութեան մասին է:

Փաքիստանի վարչապետը այդ այցի ընթացքին յայտարարած է. «Մենք կողմ ենք Ատրպէյճանի բոլոր գրաւեալ տարածքներու, որոնց շարքին նաեւ Լեւոնային Ղարաբաղի, ազատագրմանը»:

Ռազմական նոր արուեստագիտութիւններ ձեռք բերելու շուրջ բանակցութիւններ Ատրպէյճանը այսօր կը վարէ նաեւ Ռուսաստանի, Թուրքիոյ եւ Իսրայէլի հետ: Մասնաւորապէս, Իսրայէլէն, ըստ «Նեզավիսիմաեա կագեթանի», Ատրպէյճանը մտադիր է ձեռք բերել հակա-օդային պաշտպանութեան համակարգ:

Փորձագէտներու կարծիքով, «Իսկանդեր» գերժամանակակից համակարգը այսօր դեռ անհասանելի է յայտնի բոլոր հակահրթիռային համակարգերու համար:

## Ո՞ր Են Գնում Սիրիահայերի Համար Հաւաքուող Գումարները



Սիրիահայերու պաշտպանութեան նուիրուած քննարկումի մասնակիցները

Այն, ինչ անում է Հայաստանը սիրիահայերի համար, բաւարար է բարեկեցիկ կեանքի համար: Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնների Նոյեմբեր 9-ին կազմակերպած քննարկման մասնակիցները կոչ արեցին պետական մարմիններին աւելի ակտիւ լինել:

«Որպէսզի մենք պարոն Նալբանդեանին չհիստուենք, ինդրենք, որ յայտարարութեամբ հանդէս գայ: ԱԳՆ-ից ինձ ասում են, որ Նալբանդեանը հանդէս է գալիս յայտարարութեամբ, բայց դա մամուլի համար չէ», - ասաց ՍԴՀԿ ատենապետ Նարեկ Գալստեանը:

Ըստ նրա, Հայաստանն այսօր չունի սիրիահայերին այստեղ պահելու ծրագիր: Աւելին՝ բազմաթիւ ներգաղթեալներ մեր երկրում հանդիպում են խոչընդոտների:

«Մարդիկ բողոքում են, քանի որ առաջին ամիսը գալիս են, դեռ ոչ մի բանին ծանօթ չեն, մէկ էլ հարկայինը գալիս մի քանի հարիւր հազար տուգանում է, սա հարուած է նրանց համար:

Սիրիական պատերազմը սկսելուց ի վեր, աշխարհի տարբեր անկիւններում կազմակերպուած են դրամահաւաքներ՝ սիրիահայերին

օգնութիւն ցուցաբերելու համար: Ուսումնասիրութիւնները ցոյց են տուել, որ դրանցից ոչ բոլորն են հասնում նպատակակէտին:

«Եթէ Հալէպի ժողովուրդը այդ վիճակում է, ո՞ր են այդ գումարները, թող բացայայտ ասեն, բացթողումը կիլիկիոյ կաթողիկոսութեանն է՝ Արամ առաջինի գլխաւորութեամբ, իրենք են հաւաքում այդ գումարները» - ասում է սիրիահայ, ՍԴՀԿ փոխատենապետ Վազգէն Մեսրոպեանը:

Ներգաղթեալներին օգնութիւն ցուցաբերելու համար ամէն տարի գումարներ է յատկացնում նաեւ ՄԱԿ-ը: Բայց այս կառուցից եկող գումարները դէպի մեր երկիր տարէցտարի նուազում են:

«Պայմանաւորուած է նրանով, որ հոսքեր եղան Եւրոպա, մեծ թիւով գումարներ ծախսուած են այստեղ գնացող փախստականներին պահելու համար: Ցաւոք սրտի մեր գործընկերները, երեւի մտածում են, որ մենք այնքան լաւ ենք աշխատում, որ սիրիահայերին պահելու տեսանկիւնից գումարի կարիք չունենք», - նշում է Սփիւռքի նախարարութեան Մերձավոր եւ միջին արեւելքի հայ համայնքների վարչութեան պետ Լեւոն Անտոնեանը:

## Գերմանիա Պատրաստակամութիւն Յայտնած Է Ապաստան Տրամադրել Թուրքիոյ Գնչուածներուն

Գերմանիոյ Եւրոպայի հարցերով պատասխանատու նախարար Միշէլ Ռոթը խստօրէն դատապարտած է Թուրքիոյ նախագահ Ռէճեօ Թայիպ Էրտողանի քայլերը: Ինչպէս կը հաղորդէ «Արմենբրես»-ը, այս մասին նախարարը խօսած է Die Welt պարբերականին տուած հարցազրոյցին:

«Թուրքիոյ մէջ ներկայիս տեղի ունեցող իրադարձութիւնները որեւէ անհրաժեշտ չունին եւրոպական արժէքներու, օրինական պետութեան սկզբունքի, ժողովրդավարութեան եւ մամուլի ազատութեան հետ: Այս պատճառով թրքական կառավարութեան մեր պատասխանը պարզ է եւ յստակ՝ այսպէս չի կրնար շարունակուիլ», - նշած է ան:

Յիշեցնելով, որ վերջին շրջանին Թուրքիոյ մէջ մեծ թիւով պատգամաւորներ, գիտնականներ եւ լրագրողներ ձերբակալուած են՝ Ռոթը նշած է, որ Գերմանիոյ կառավարութիւնը կը համագործակցի բոլոր ճնշուածներուն հետ: «Գերմանիան աշխարհի համար բաց երկիր է, այն բաց է քաղաքական հետապնդուածներու նկատմամբ ցանկացած անձի համար: Բոլորը կրնան ապաստան ստանալու խնդրանքով դիմել Գերման-




Գերմանիոյ Եւրոպայի հարցերով նախարար Միշէլ Ռոթ

իային», - նշած է ան:

Գերմանիոյ Եւրոպայի հարցերով պատասխանատու նախարարը, յիշեցնելով, որ 9 Նոյեմբերին հրապարակուած է ՄԹուրքիոյ առաջին ընթացի մասին գեկոյցը՝ ընդգծեց, որ այն բացասական գնահատականներ կը պարունակէ:

«Եւրոպայի ճնշող Ռ՞ր են Գնում Սիրիահայերի Համար Հաւաքուող Գումարները Այն, ինչ անում է Հայաստանը սիրիահայերի համար, բաւարար է բարեկեցիկ կեանքի համար:

### ԱՄՆ-ն եւ Հայաստանը կը քննարկեն Ռազմական Համագործակցութիւնը Ընդլայնելու Հնարաւորութիւնը



ԱՄՆ պաշտպանութեան նախարարի փոխտեղակալ՝ Մայքլ Քարփինթըրը «Ազատութիւն» ռատիօկայանի հետ իր ունեցած հարցազրոյցին նշեց, թէ Հայաստանի հետ հիմնական համագործակցութիւնն ունին շարք մը ոլորտներու մէջ. «Հայաստանը մասնակցում է Աֆղանիստանում «Վճռական աջակցութիւն» (Resolute Support) առաքելութեան, իր զօրքով նպաստում է Գոսոփոյում «Քեյֆոր» (Kfor) առաքելութեան, ապացուցում է, որ պատրաստ է ու ի վիճակի է իր նպաստը բերել միջազգային տարբեր խաղաղապահ ջանքերին: Ունենք շատ լաւ գործընկերութիւն Հայաստանի հետ: Այստեղ վերապատրաստումներ ու համատեղ գործառնութիւններ ենք անցկացնում, ունենում ենք առողջ քննարկումներ, խորհրդակցութիւններ: Այժմ մենք դիտարկում ենք [համագործակցութիւնն] ընդլայնելու հնարաւորութիւնները»:

Անդրադառնալով ռուս-ամերիկեան հակասութիւններուն եւ անոնց ունեցած ազդեցութեան հայ-ամերիկեան ռազմական ու քաղաքական յարաբերութիւններուն վրայ, Քարփինթըր բացայայտեց, թէ ԱՄՆ-ն ու Ռուսաստանը ներկայիս շատ բարդ յարաբերութիւններ ունին: Ամերիկայի համար անընդունելի է Ռուսաստանի կողմէ Ռեքանիոյ ինքնիշխանութեան ստանահարումը: Ան համաձայն չէ Սուրիոյ մէջ Ռուսաստանի ռազմական միջամտութեան. «այն իւր լցնում Սիրիայի քաղաքացիական պատերազմի կրակի վրայ»: Քարփինթըրը նշեց նաեւ, որ Հայաստանի եւ տարածաշրջանին մէջ Ռուսիոյ հետ գործընկերներ են, իբր «ԵԱՀԿ Մինսկի խումբի համախաղաղակող երկիրներ: Ան շեշտեց «Մեր շահերից է բխում հասնել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան դիւանագիտական լուծմանը: Այնպէս որ, մենք պատրաստ ենք աշխատել մեր ռուս գործընկերների հետ եւ փորձել գտնել այդ լուծումը, եթէ դա հնարաւոր է»:

Պաշտպանութեան նախարարի փոխտեղակալը հաստատեց, թէ

Հայաստանը իրաւունք ունի որոշելու իր արտաքին քաղաքականութեան ուղղութիւնը: Եթէ Հայաստանին կը գոհացնէ իր յարաբերութիւնները Ռուսիոյ հետ, ապա Ամերիկան ըսելիք չունի: Այդ Հայաստանի ինքնիշխան ընտրութիւնն է: «Ռուսաստանի կողմից սպառնալից մատակարարումը լրջօրէն ապակայունացնում է իրավիճակը: Կարծում եմ, որ այսպիսի տարածաշրջան գէշ է ռազմական միջոցներ մատակարարելը հակամարտութեան խաղաղ լուծման ճանապարհը չէ», - ըսաւ ան:

Մայքլ Քարփինթըրը յայտնեց, թէ Ամերիկա Ռուսիոյ հետ բաց երկիստութեան մէջ է շարք մը հարցերու շուրջ, ներառեալ՝ Հայաստան, Արցախ իրավիճակը, Ռեքանիոյ եւ Սուրիոյ հետ կապուած հարցեր:

«Ազատութիւն» ռատիօկայանի գրուցակիցը տարածաշրջանին նկատմամբ իր մտավախութիւնները չթաքցնելով, առաջարկեց հնարաւորինս շուտ դիւանագիտական լուծում գտնել:

Ակնարկելով Թուրքիոյ դերակատարութեան ան դիտել տուաւ, թէ Թուրքիան ՆԱՏՕ-ի դաշնակիցն է ու կարեւոր գործընկերը տարածաշրջանին մէջ. «Այն դերակատարում ունի տարբեր տարածաշրջաններում՝ Լեռնային Սիջերկրական ծովի արեւելեան հատածում, Պալէստինայում, դէպի հիւսիս եւ Հարաւային Կովկասում: Մենք լաւ յարաբերութիւններ ունենք Հայաստանի հետ, այնպէս որ, մենք տեսնում ենք մեր դերը՝ կամուրջ ծառայել Հայաստանի եւ Թուրքիայի, ինչպէս նաեւ Թուրքիայի ու տարածաշրջանում նրա տարբեր գործընկերների միջեւ: Մենք, անշուշտ, սերտ յարաբերութիւններ ունենք մեր թուրք գործընկերների հետ՝ ցանկացած սպառնալիքի դիմակայելու հարցում, ներառեալ՝ իրաքում ու Սիրիայում «Տահէշ»-ին պարտութեան մատնելը եւ դրա տարածումն աշխարհում կանխելը, ինչը մեր ազգային անվտանգութեան առաջնահերթութիւններէն է»:

### ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ԿԵՆՍՈՒՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՄՈՂՈՎ ՄԱՐՕՔԻ ՄԷՋ

Այս օրերուն Մարօքի Մարաքէշ քաղաքին մէջ տեղի կ'ունենայ Կենսոլորտի վերաբերեալ միջազգային 22րդ համաժողովը, մասնակցութեամբ 196 երկիրներէ ժամանած շուրջ 20,000 պատուիրակներու: Նախորդ համաժողովը տեղի ունեցած էր Փարիզի մէջ, ուր քայլեր առաջարկուած էին թեթեւցնելու համար երկրագունտի մթնոլորտի ապականացումը:

Սոյն համաժողովը պիտի տեւէ մինչեւ Նոյեմբեր 18: Այս առթիւ հնարաւորութիւն պիտի ըլլայ նաեւ զրուցելու գանազան այլ հարցերու մասին, գլխաւորաբար՝ երկրագործութեան, ուտելիքի ապահովութեան, ուժանիւթի, ճարտարարուեստի, փոխադրութիւններու եւ ջրամատակարարման առնչութեամբ:

### ԼԻԲԱՆԱՆԻ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՌՆՃՈՒԿԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ



Լիբանանի Հանրապետութեան նախագահ Միշել Աունի ընտրութեան եւ Սաատ Էլ Հարիրիի վարչապետութեան պաշտօնին նշանակումէն ետք ստեղծուած է ազգային համերաշխութեան ձեւական մթնոլորտ մը: Այսու հանդերձ նշանակեալ վարչապետ Հարիրիին համար նոր խոչընդոտներ ստեղծուած են: Հարցը կը կայանա նոր նախարարներու նշանակումին եւ թիւին մէջ:

Ըստ երեւոյթի Սաատ Էլ Հարիրիի ցանկութիւնն է գոհացում տալ բոլոր կողմերուն (խմբակցութիւններ եւ կուսակցութիւններ): Սակայն կողմեր ալ կան որոնք կ'ուզեն կարեւորագոյն եւ առաջնահերթութիւն նկատուող նախարարական աթոռ ձեռք ձգել: Մինչեւ իսկ խօսք կայ նախարարներու թիւը 32ի հասցնել: Այս պարագային հայ գաղութին համար կրնայ վիճակուել նախարարական 2 աթոռ:

Արդարեւ, կնճռոտ հարց մը, որուն համար բարօք ելք մը կը սպասուի:

### ԻՐԱՔԻ ՍՈՒՍՈՒԼ ՔԱՂԱՔԸ ՊԱՇԱՐՄԱՆ ՏԱԿ



«Իսլամական պետութիւն» ծայրայեղականներու վերջին եւ գլխաւոր ամրոցը նկատուող Իրաքի Մուսուլ քաղաքն էր որ լրիւ պաշարման ենթարկուած ըլլալով, ժողովուրդը խուճապի մատնուած է: Շատ մը ընտանիքներ իրենց փոխադրելի գոյքերով ու ծրարներով փախուստի ելած են աւելի ապահով երդիք մը գտնելու յոյսով: Մուսուլէն քսան քիլոմետր հեռաւորութեան վրայ, նոր գաղթական մը հաստատուած է «Հասան Շամ» անունով: Այստեղ եւ նորահաստատ այլ գաղթականներու մէջ, կը պատսպարուին շուրջ 30 հազար տեղահաններ:

Մուսուլ քաղաքի Արեւելեան շրջանէն ներթափանցած իրաքեան բանակի միաւորներ, տուն առ տուն եւ սենեակ առ սենեակ սկսած են խուզարկութիւններ կատարել ու դաժան կռիւներ մղել ծայրայեղականներու դէմ: Կը կարծուի թէ վերջնական եւ լրիւ ազատագրումը կրնայ ուշանալ: Յանկուլութիւն կայ օտար ոյժերու, յատկապէս ԱՄՆ-ի զօրքերու միջոցով իրականացնել յաղթանակը...:

### ՍՈՒՐԻՅՈՅ ՄԷՋ ԻՍԼԱՄԻՍՏՆԵՐԸ ԳԵՏԻՆ ԿԸ ԿՈՐՍՆՑՆԵՆ

Իսլամիստ ծայրայեղականներու երազած «Խալիֆայ»ութիւնը անյոյս վիճակի մատնուած է: Հիմա իրենց մայրաքաղաքը հաստատած են Սուրիոյ Ռաքքա քաղաքը: Հետզհետէ անոնք («Իսլամական պետութիւն») իրենց գրաւած հողերուն եւ բնակավայրերուն 50 առ հարիւրը կորսնցուցած են: Իսկ մնացեալ 50 առ հարիւրին ազատագրումին համար Ռուսաստանն ու ԱՄՆ տարակարծութիւններ ունին ռազմավարական տարբեր հայեցողութեան պատճառով:

Յամենայն դէպս ապագան մուսլ է այդ տարածաշրջանին համար:

# ՌԱՅՐԿ-ը Դիտարկեց Արցախի Կարգավիճակը՝ ԼՂՀ Հիմնախնդրի Միջազգային Կարգաւորման Համատեքստում



Ռազմավարական եւ ազգային հետազոտութիւնների հայկական կեդրոնում (ՌԱՀՀԿ) 3 Նոյեմբերի 2016թ տեղի ունեցաւ Կլոր սեղանի ձեւաչափով հերթական քննարկումը, որը նուիրուած էր ԼՂ հակամարտութեան միջազգային կարգաւորման համատեքստում Արցախի կարգավիճակի վերաբերած մասնաթեմային: Մասնակցում էին փորձագիտական մակարդակով խնդրին տիրապետող անձինք, վերլուծաբաններ, քաղաքագէտներ, հանրային հատուածի եւ ԶՄ-ների ներկայացուցիչներ: Քննարկմանը ներկայ էր նաեւ ՌԱՀՀԿ հիմնադիր Բաֆֆի Յովհաննիսեանը:

Սեմինարը բացեց եւ ներկաներին ողջունեց ՌԱՀՀԿ վարչական տնօրէն Կարապետ Կալենչեանը՝ նշելով, որ այսօրուայ քննարկումը ապրիլեան պատերազմից յետոյ ԼՂՀ հիմնախնդրի հետ կապուած գործադրմանը համակողմանիօրէն կշռադատելու եւ իմաստաւորելու նպատակ ունի:

Հիմնական զեկոյցներով հանդէս եկան քաղաքագէտ Ալեքսանդր Քանանեանը եւ ՌԱՀՀԿ հետազոտական ծրագրերի ղեկավար Մանուէլ Սարգսեանը:

Արցախեան քաղաքականութեան իրաւաքաղաքական հայեցակարգի վերանայման նպատակաւարմարութեան մասին էր Ալեքսանդր Քանանեանի զեկոյցումը: Խնդրի համապարփակ վերլուծութիւնը քաղաքագէտին բերել է այն համոզման, որ Արցախի հիմնահարցի վերջնական լուծման շահեկան տիպօրինակը «միացումն» է: «Այն առարկութիւնը, թէ միացումը վերահաստատող ակտերը միջազգային հանրութեան համար երբեք ընդունելի չեն լինի՝ անտեղի է արդեն իսկ այն պատճառով, որ Արցախի անկախութիւնն էլ նոյն միջազգային հանրութիւնը չի ճանաչել: Մինչդեռ միացումը, ի

հեռուկա ժամանակավրէպ քաղաքագիտական առասպելաբանութիւնների, խնդիրը լուծում է ինքնաբերաբար», - նշեց Քանանեանը՝ փաստելով, որ «անկախութեան» տիպօրինակի ընտրութիւնն իրական լուծում չի տալիս հայոց պետականութեան առջեւ ծառայած որեւէ լուրջ մարտահրաւէրի: Ալեքին՝ առաջացնում է Հայաստանի ազգային անվտանգութեան հիմնարար կարեւորութեան՝ հանրօրէն դեռեւս լիովին չգիտակցող մի շարք հարցադրումներ, որոնցից մէկը, ըստ զեկոյցողի, վերաբերում է ՀՀ արեւելեան միջպետական սահմանի խնդրին: «Յուսալ, որ վերջինիս արցախեան հատուածը ճանաչուելու է ներկայ սահմաններում կամ առանց այդ սահմանների յստակեցման, լուրջ միամտութիւն է», - նկատեց բանախօսը:

Հակամարտային իրավիճակներում ինքնիշխանութեան խնդրին արծարծեց Մանուէլ Սարգսեանը՝ ներկաների ուշադրութիւնը հրահրելով սեփական իրաւունքը ճիշտ ձեւակերպելու կարեւորութեանը, քանի որ քաղաքականութիւնը, ըստ նրա, «պայքար է սեփական իրաւունքների համար»: Քաղաքագետի խօսքով՝ Արցախեան քառօրեայ պատերազմից յետոյ ԼՂՀ հիմնախնդրի վերաբերմամբ լուրջ փոփոխութիւններ են տեղի ունեցել ինչպէս հայ հասարակութեան ներսում, այնպէս էլ միջազգային հանրութեան դիրքորոշման մէջ: Ի մասնաւորի՝ կարգաւորման դիւանագիտութեան առաջին գիծ է դուրս եկել Արցախի կարգավիճակի խնդիրը: «Այժմ առաւելապէս խօսուած է ոչ միայն ԼՂՀ անկախութեան միջազգային ճանաչման, այլեւ արցախեան խնդրի կարգաւորման հայեցակարգի վերանայման հնարաւորութեան մասին: Մեզանում աւելի ու աւելի կասկածահարոյց են դարձել թէ՛ ԼՂՀ կողմից

# Պեւծիքայի Խորհրդարանի Նախագահ Եւրոպայի Դռները Լայնօրէն Բաց են Հայաստանի Առջեւ

Վարչապետ Կարէն Կարապետեանը ընդունեց պաշտօնական այցով Երեւան գտնուող Պեւծիքայի Թագաւորութեան Խորհրդարանի նախագահ Քրիստին Դըֆրէյնին:

Վարչապետը ողջունեց տիկին Դըֆրէյնի գլխաւորած պատուիրակութեան այցը մեր երկիր եւ վստահութիւն յայտնեց, որ այն կը նպաստէ հայ-Պեւծիքական յարաբերութիւններու հետագայ զարգացման ու ամրապնդման: Կարէն Կարապետեանը ընդգծեց, որ ՀՀ կառավարութիւնը շահագրգիռ է աշխուժացնելու Պեւծիքայի հետ քաղաքական երկխօսութիւնը, առաւել բազմաբնոյթ դարձնելու առեւտրատնտեսական յարաբերութիւնները եւ խորացնելու համագործակցութիւնը կրթութեան եւ մշակութի յոլորտներուն մէջ: Վարչապետը ընդգծեց, որ յառաջիկային կառավարութիւնը տարբեր խողովակներով, այդ կարգին՝ դեսպանութիւններու միջոցով միջազգային գործընկերներուն կը ներկայացնէ ներդրումային ծրագրերու փաթեթ եւ աւելցուց, որ գործարքային կապերու ընդլայնման գործին կը կարեւորէ նաեւ «Արմենիա-Վալտիա էքսպորտ» գործակալութեան եւ հայ-Պեւծիքական առեւտրային պալատի գործունէութիւնը: Կարէն Կարապետեանը բարձր գնահատեց Պեւծիքայի կողմէ ինչպէս տնտեսական, այնպէս ալ մասնագիտական եւ գիտարուեստական օժանդակու-

թիւնը Հայաստանի մէջ ժամանակակից Ուժուցքաբանութեան դերականցութեան կեդրոնի ստեղծման գործին, որ կը սպասարկէ ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ տարածաշրջանի բնակչութեան:

Դըֆրէյնն իր երկրի աջակցութիւնը յայտնեց Հայաստան-Եւրոպական միութիւն կապերու ընդլայնման գործին եւ ընդգծեց, որ Եւրոպայի դռները լայնօրէն բաց են ՀՀ-ի հետ համագործակցութեան հետագայ զարգացման եւ ամրապնդման համար:

Զրուցակիցները կարեւորեցին «Brussels Airlines» օդանաւային ընկերութեան մուտքը Հայաստանեան շուկայ եւ վստահութիւն յայտնեցին, որ այն կը նպաստէ մեր երկիրներու միջեւ յարաբերութիւններու աշխուժացման ու զբօսաշրջութեան զարգացման:

Կարէն Կարապետեանը եւ Քրիստին Դըֆրէյնն անդրադարձած են նաեւ Լեւնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորմանը եւ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման:

Կարէն Կարապետեանը բարձր գնահատեց այն փաստը, որ 1998-ին Պեւծիքայի Խորհրդարանը ընդունեց Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւը եւ աւելցուց, որ 2015-ին ներկայացուցիչներու պալատի կողմէ ընդունուած բանաձեւով ամբողջացած է Պեւծիքայի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացը:

տարածքային զիջումների քննարկումը եւ թէ՛ ԼՂՀ-ի անկախութեան բուն գաղափարը՝ թէ՛ եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները շարունակում են պնդել Մադրիդեան սկզբունքներում ամրագրուած գծապատկերը պահպանելու անհրաժեշտութիւնը», - շեշտեց Սարգսեանը:

Վերջում զեկոյցների շուրջ տեղի ունեցան հարցուպատասխան եւ մտքերի աշխուժ փոխանակութիւն, որոնց մասնակցեցին Բաֆֆի Յովհաննիսեանը, «Մոդուս Վիվենդի» կազմակերպութեան ղեկավար, դեսպան Արա Պապեանը, «Ռեսպոնս Գայանթ Մոնթիսեանը, Միջազգային եւ անվտանգութեան հարցերի հայկական ինստիտուտի (ՄԱՀՀԻ) փորձագէտ Արմէն Վարդանեանը, քաղաքագէտներ Արմէն Աղաբաբեանը, Սերգէյ Շաքարեանը եւ ուրիշներ:

Ռազմավարական եւ ազգային

հետազոտութիւնների հայկական կեդրոնը Երեւանում գտնուող առաջատար վերլուծական հաստատութիւն է: Որպէս շահույթ չհետապնդող հիմնարկութիւն, որը յանձնառու է իրականացնելու բազմազգային, արհեստավարժ հետազոտութիւններ ու վերլուծութիւններ, այն ձգտում է բարձրացնել համազգային դիսկուրսի մակարդակը եւ ընդլայնել քաղաքացիական ներգրաւուածութիւնը քաղաքականութեան կայացման գործընթացում՝ խթանելով առաւել համապարփակ հանրային գիտելիքներ: Հիմնադրուած լինելով 1994թ. ՀՀ արտաքին գործերի առաջին նախարար Բաֆֆի Յովհաննիսեանի կողմից, ՌԱՀՀԿ-ն տարիների ընթացքում ձեռք է բերել ազգային եւ միջազգային քաղաքականութեան հարցերի լայն շրջանակը փորձագիտական վերլուծութեան ենթարկող առաջնային աղբիւրի նշանակալի համբաւ:

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաճեղստ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

### ՆԻԻ ԵՈՐՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԲ ԳԵՐԱԳՈՅՆ ԶՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ



Նոյեմբերի 2-3-ը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահութեամբ, ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի առաջնորդարանում տեղի ունեցաւ Գերագոյն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը:

Ժողովի բացմանը ԳՀԽ հոգեւորական եւ աշխարհական անդամներին հայրապետական իր օրհնութիւնն ու պատգամը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբութիւնը գոհունակութիւն յայտնեց անցնող օրերին Նիւ Եորքում անցկացուած Գերագոյն հոգեւոր խորհրդի, Հիւսիսային Ամերիկայի երեք թեմերի եւ ՀԲԸՄ կենտրոնական վարչութեան միացեալ ժողովի առիթով՝ ընդգծելով, որ այն կարեւոր նշանակութիւն ունեցաւ ԳՀԽ անդամների համար՝ Հիւսիսային Ամերիկայի հայութեան ազգային-եկեղեցական կեանքում առկայ մարտահրաւէրներին տեղում հաղորդ դառնալու առումով:

Այս առիթով վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց Տ. Խաթալ արքեպիսկոպոս Պարսամեանին եւ ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի սպասաւորներին այս օրերին ցուցաբերուած ջերմ հիւրընկալութեան համար: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ Ս. Հոգու առաջնորդութիւնը մաղթեց ԳՀԽ ժողովի աշխատանքներին ի նպաստ Հայ Եկեղեցու պայծառութեան եւ առաքելութեան արդիւնաւորուան:

Ժողովի օրակարգում ընդգրկուած էին Ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրութեան նախագծի մշակման ընթացքին վերաբերող հարցեր, Եկեղեցու կառավարման արդիւնաւէտութեան բարձրացմանն ուղղուած ծրագրեր, հոգեւոր-կրթական հաստատութիւնների եւ եկեղեցական կառույցների գործունէութեանն առնչուող խնդիրներ:

Ժողովի նիստերն ատենապետեց ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը:

Մինչ օրակարգի նիւթերի քննարկումը ժողովականներին իրազեկուեց 2016 թ. Սեպտեմբերի 6-9-ը Արցախում գումարուած ԳՀԽ ժողովի որոշումների կատարման ընթացքի մասին:

Ժողովին «Դաւիդեան» հիմնադրամի նախագահ եւ բարեգործ Ասօ Դաւիթեանը Գերագոյն հոգեւոր խորհրդին զեկուցեց Հայոց Եկեղեցու գործառնութիւնների բարելաման ծրագրի ընթացքի վերաբերեալ: Նա տեղեկացրեց, որ միշտ հանդիպումներ է ունեցել «Մաքբինգի ընդ Քոմփանի» խորհրդատուական ընկերութեան

ներկայացուցիչների հետ, քննարկել ծրագրի մանրամասները եւ արդիւնքում պատրաստել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հարցաշար, որը ներկայացուեց ԳՀԽ անդամների ուշադրութեանը: ԳՀԽ-ն ծանօթացաւ նաեւ ծրագրի բարեյաջող իրականացման համար ստեղծուած Գործադիր եւ խորհրդատուական մարմինների կազմին՝ բաղկացած հոգեւորական եւ աշխարհական անդամներից եւ Հայաստանից, եւ Սփիւռքից:

Այս կապակցութեամբ ԳՀԽ անդամները շնորհակալութիւն յայտնեցին տիար Ասօ Դաւիթեանին կատարուած աշխատանքի համար՝ կարեւորելով Եկեղեցու կառավարման արդիւնաւէտութեան բարձրացմանն ուղղութեամբ գործադրուող ջանքերը:

Այնուհետեւ Գերագոյն հոգեւոր խորհուրդը քննարկեց Ազգային-եկեղեցական ժողովի կանոնադրութեան նախագիծը, որ պատրաստուել է Հայոց Եկեղեցու ժողովական կառույցների կանոնադրութիւնների մշակման յանձնախմբի կողմից: Նախագծի հետ առնչուած անհրաժեշտ լուսաբանութիւններ տրուեցին յանձնախմբի ատենապետ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի եւ յանձնախմբի անդամներ Գերաշնորհ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրեանն ու իրաւաբանական գիտութիւններ

Շար.ը էջ 18

### ՉԱՅԽ-Ի ԼԻԱՆԻՍԾ ԺՈՂՈՎԸ ԶԵՎՈՐԹԱՌՈՒՆԻ ՄԷՋ



Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդը (ՀԱՀԽ-ը) իր լիանիստ ժողովը գումարեց Հէվըրթսոնի Նահատակաց Ժողովական Եկեղեցու մէջ, Հոկտեմբեր 20-21, 2016ին:

ՀԱՀԽ-ը խորհրդակցութեան նիւթ ըրաւ հետեւեալ նիւթերը.

1. Վերատեսութիւն Հայ Աւետարանական Եկեղեցու 170-ամեակի տօնակատարութեանց: Ժողովը վերատեսութեան ենթարկեց Հայաստանի եւ Սփիւռքի մէջ տեղի ունեցած Հայ Աւետարանական Եկեղեցիի 170-ամեայ յրբեյեանի տօնակատարութիւնները, ինչպէս նաեւ համահայ Աւետարանական Հովիւներու համագումարը:

Հինգշաբթի, Հոկտեմբեր 27-ի յետմիջօրէին Հայ Քոյրերու Վարժարանի մէջ տեղի ունեցաւ Մշակոյթի Ամսուան եզրափակիչ հրապարակային հանդիսութիւնը, ներկայութեամբ վարժարանի Առաքինագարդ Քոյրերուն, ծնողներուն եւ պաշտօնէութեան: Օրուան հանդիսավարն էր Տիկ. Լինտա Գանտիլեան: Հանդիսութիւնը սկիզբ առաւ Հ.Հ.քայլերգով որ դաշնամուրի վրայ նուագեց Շանթ Նաճարեան, ապա մանկապարտէզի աշակերտները բեմ բարձրանալով արտասանեցին եւ երգեցին հայ մշակոյթի նուիրուած ոտանաւոր մը եւ երգեր ապա Տնօրէնուհի՝ Քոյր Լուսիա իր բացման խօսքով արժեւորեց Հայ Մշակոյթը, տալով անոր արժանի տեղը հայ ժողովուրդի կեանքին մէջ գայն կոչելով հայապահպանման ապահով կուսան: Հանդիսութեան ընթացքին բոլոր աշակերտները առիթ ունեցան իրենց մասնակցութիւնը բերելու երգելով, արտասանելով եւ ներկայացումներով, անոնք մեկնաբանեցին հայ գրականութեանն էլ երաժշտութեանն էլ լեզուն փառաբանող դասական գործեր. աշակերտներուն երգեցողութեան կ'ընկերակցէր դաշնամուրով վարժարանիս երաժշտութեան ուսուցչուհի՝ Տիկ. Վարդուհի Պաղտասարեան. հանդիսութեան ընթացքին երկրորդ դասարանը ներկայացուց փոքրիկ թռչունին առակը իսկ եօթներորդ դասարանը՝ Մկրտիչ Պէշիկթաշեանի «Աղուէսին Քիթը»: Խօսուն պատկերներ էին երկու դասարաններու ներկայացումներն ալ, որոնք իրենց հայերէն ուսուցչուհիներու հսկողութեամբ պատրաստած էին ծանօթանալու եւ ծանօթացնելու հայ-

կական առակներուն, միաժամանակ մեծ հաճոյք պատճառելով հանդիսատեսին՝ փոքրերուն եւ մեծերուն նաեւ ծնողներուն: Հանդիսութիւնը իր աւարտին պահած էր գեղեցիկ ներկայացում մը պատրաստուած Ութերորդ դասարանի աշակերտներուն կողմէ, Յորենի մասին: Անոնք ներկայացուցին հայկական մշակոյթի, ճաշացուցակի եւ աւանդութիւններու մէջ ցորենին ունեցած կարեւոր տեղը, այս ներկայացումը ամբողջացաւ Չորրորդ դասարանի աշակերտներու կատարողութեամբ «Հաց թուխ»-ի երգախառն ներկայացումը: Անոնք ցոյց տուին թէ հայ մամիկը ինչպէս տաք փուռին առջեւ կը պատրաստէր հայկական լաւաշը, որմէ ետք բեմահարթակը լեցուեցաւ առաջին երկրորդ եւ երրորդ դասարանի աղջիկներու հայկական շուրջպարով, մինչ ներկաները կը վայելէին համով ցորենի հատիկը ըմբոշիւնելով մանուկներու պարը հայկական խանդավառ երաժշտութեան ներքեւ:

Հանդիսութեան աւարտին Հ.Ք.Վարժարանի մեծ ընտանիքը հազեցած էր մշակոյթով եւ բոլորին դէմքին գոհունակութեան ժպիտը զգալի էր մանաւանդ՝ վարժարանիս Տնօրէնուհի՝ Քոյր Լուսիա, որ մեծ ուրախութեամբ ողջունեց աշակերտները, որոնք ջանք չէին խնայած այս հանդիսութիւնը լաւագոյնս ներկայացնելու, ապա շնորհակալութիւն յայտնեց Հայերէն լեզուի դասաւանդող ուսուցչուհիներուն եւ երաժշտութեան ուսուցչուհիին, որոնք նուիրումով եւ հաւատքով կը կատարեն իրենց վստահուածը, լրիւ տարուան ընթացքին վառ կը պահեն իր իր զգացումները:

## ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

---

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

# ՈՂՋՈՅՆԱՐՄԻՆԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԱՅՈՒՆԶ ՍԱՐԱՅԱՐԹԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԻ ԱՐՄԻՆ ԱՍՏՂԱԳԵՏՆԵՐԻՆ

## ՊՕՐՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց աշխարհի մայր ոստանի հեռու հարաւի լեռնաշխարհում Սիսեան քաղաքն է: Նրա մօտակայքի բարձր լեռների գոգում սարահարթ է: Քարահունչն է այն: Նրա երեսին, հազար-հազար դարերի շունչից մամրակալած, յաղթ կանգնած են 203 մարդահասակ ու աւելի բարձր քարեր: Նրանք ցրուած են մէկ երրորդ մղոն շրջանաձև տարածութեան վրայ, ոմանք կշռում են նոյնիսկ աւելի քան 50 տոննա: Սարահարթի այդ կոթողը ճանաչուած է որպէս «Հայկական Ստոնհենջ-Քարահունչ»: Գիտնականների կողմից նրա տարիքը հաշուարկուած է մ.թ.ա. 7500 տարուայ հնութեան կոթող: «Հայկական Քարահունչ»-ը 4500 տարուայ աւելի վաղ դարաշրջանի կոթող է քան Անգլիայի «Ստոնհենջ»-ը: 203 բազալտ տեսակի քարերի խմբաքանակի կեդրոնում քարէ շրջանակ է՝ «հենջ»-ը: «Ստոնհենջ»-ը գտնուած է Անգլիայի մայրաքաղաք Լոնդոնից յիսուն ք.մ. հեռավորութեան հարթավայրում: Եւրոպայում, աւելի նոր դարաշրջաններին պատկանող բազմաթիւ նման «Ստոնհենջ»-ներ կան: Նրանք ի՞նչ էին եւ ինչի՞նչ էին ծառայում դեռեւս ստոյգ մանրամասնութեամբ յայտնի չէ:

Հնագէտները դեռեւս համարում են, թէ ովքեր էին Քարահունչի կոթողի կառուցողները, կամ էլ ովքեր էին այնտեղ բնակուողները: Նրանք գտնուած են, որ ամբողջ կառուցը աստղադիտական մի կոթողի նախատիպն է: Սակայն, այդ շրջանաձև քարերի պարզ դասաւորումը ինչպէ՞ս կարող էր տեղեկութիւն հաղորդել աստղերի մասին: Այո, Քարահունչը աշխարհի ամենահին աստղադիտարանի նախատիպն է: Խոշոր քարերի այդ բացառիկ կոթողի անգուգականութիւնը կայանում է նրանում, որ նրանց վրայ բացուած փոքր անցքերը նայում էին դէպի տարբեր ուղղութիւններ: Հեռադիտակներին նմանուող այդպիսի անցքերով 85 քարեր կան: Այդ անցքերը՝ հորիզոնում կամ գիշերային երկնքում, ուղղուած են տարբեր դասաւորութեան դիրքերի: Ինչին որ նրանք ուղղուած են, տակաւին մնում է առեղծուած: Ըստ հնէաբանների փաստարկների, մարդիկ փորձած պիտի լինէին հասկանալու իրենց տեղը մոլորակի արեգակնային համակարգում: Քարահունչի կառուցը կոչուել է նաեւ «Զօրաց Քարեր», այդ նշանակում է, որ նրանք եղել էին զօրաւոր մարդկանց քարեր, զօրաւոր մարդկանց կողմից արարուած կառուց: Արմին ցեղի նախնիները իրապէս զօրաւոր էին, վկայ՝ Մեծամօրը, Տուչպա-Վանի ու այլ վայրերի միջնաբերդերը, վկայ՝ Արմին-հայերի նախնիների քաղաքների, բնակութեան վայրերի հնէաբանական պեղումների կառուցները, վկայ՝ «Անգեղաց Տան» Տորքը:

Հաստատուած է, որ այդ քարերի ծիրը համապատասխանում է «Կարապ» համաստեղութեանը: Որոշ ազգերի մշակութիւններում յիշատակուած է, որ մահուանից յետոյ մարդիկ այնտեղ էին վերադառնում: Արմինների հին հաւատում յիշատակուել էր, որ մահուանից 40 օրեր յետոյ մարդու հոգին գնում երկինք, դառնում

յաւերժ մի աստղ: Երբ երկնքում աստղեր շիջում էին, բոցավառ շանթի նման նրանք վայր ընկնում, Արմին-հայեր ասում էին, որ մի մարդու աստղ մարեց: Աւետարանիչներ վկայում են, որ Քրիստոս խաչելիութիւնից 40 օրեր յետոյ համբարձել երկինք: Քրիստոսի անձին վերագրուած, արմինների հին հաւատի յիշողութիւնն է այն: Քրիստոսի մասին վկայուած պատումները, Արմին-հայերի ու Զրադաշտականութեան հաւատների սկզբունքների անցեալի յիշողութիւնն է: Արմինների դիցաբանութիւնը աւելի կանուխ էր արարուած քան Զրադաշտականութիւնը, ինքը Զրադաշտը ծնուել է Արմինայի Սիւնիաց աշխարհում, ծնունդն էլ Արմին մայրիկից, հայրիկն էլ մարացի: Նրա ուսմունքները բազմաթիւնը չէին: Վաղ ժամանակների յոյներ, չինացիներ եւ ուրիշ ժողովուրդներ եւս հաւատացել էին, որ «Կարապ» համաստեղութիւնը առանձնապատուկ է: Աշխարհի բազմաթիւ հին ժողովուրդների մշակութիւնները այդ համաստեղութեան մասին նման առասպելներ ունէին, հաւատացել, որ իրենք այնտեղից եկած պիտի լինէին:

Ներկայիս հնարաւոր չէ «Կարապ»-ի համաստեղութիւնը տեսնել Քարահունչի քարերի անցքերից, նրա դիրքը կտրուկ փոխուել է: Այդ պատահած պիտի լինէր վաղ ժամանակներին, երբ երկիր մոլորակի առանցքը այլ դիրքի էր, այն ատեն էր, որ այդ համաստեղութիւնը տեսնելի եղած պիտի լինէր:

Գիտնականներ հաշուարկել են, որ երկիր մոլորակի առանցքը փոխուել է 26000 հազար տարին մէկ անգամ, փոխուել նաեւ նրա կլիման, որը ջրերի յաճախ հեղեղումների եւ խոշոր չափերի կործանումների պատճառ հանդիսանում: Քարահունչը կարող էր նաեւ կառուցուած լինէր նման աղէտների նախագգուշացման համար:

Համաձայն Մելքոն Արմին խանճեանի վարկածի, Քարահունչը կարող էր լինէր այն սկզբնական վայրերից մէկը, որտեղ այցելել էին արտերկրացիներ: Եթէ, երկրի առանցքի որեւէ փոփոխութիւն եղած լինէր աւելի կանուխ քան ջրերի հեղեղումները, այն ատեն կարող էր որոշակի ժամանակաշրջանում ջրերի հեղեղումների համախորտակում պատահած լինէր: Վաղ անցեալի այդ մարդիկ՝ կարող էին մտահոգուած լինել դիտելու երկնի աստղային դասաւորութիւնը, վստահ լինելու համար, որ դարձեալ հեղեղումներ չէին պատահի:

Սակայն, կարող էր նաեւ պատահել, որ Քարահունչի կառուցումից առաջ տիեզերքի ուրիշ աշխարհներից այցելուներ եկած լինէին այդ վայր: Այդ շրջանի քարափորագրութիւնները շատ աւելի վաղ ժամակաշրջանում էին կատարուել՝ քան Քարահունչի քարերը կանգնեցուել էին: Քարահունչի քարերի խորհուրդը շատ արժանահաւատ փաստարկներ է պարունակում: Մ.թ.ա. 10000 տարիներին անցեալի փորագրութիւնները պետք չէ շփոթել Քարահունչի քարերի հետ: Հազարաւոր, հարիւր հազարաւոր մարդկերպ կեր-

պարանքներ կան փորագրուած այդ վայրերի քարերին, քարայրների որմերին, որոնցից ոմանք բաւական խեղաթիւրուած ու դժուար հասկանալի ու վերծանելի են:

Արմինա աշխարհի Քարահունչը ունի նաեւ հետաքրքիր փորագրութիւններ, որոնք պատկերում են ճաղատ գլուխներով ու շեղ աչքերով մարդկային արարածների նմանութեամբ՝ մարդակերպ էակներ: Նրանք կարող են արտաերկրայինների պատկերներ եղած լինէին: Այդ փորագրութիւնների հետաքրքիրը նաեւ այն է, որ նրանք սկաւառակներ են վերել պահում: Հնարաւոր է, որ նրանք թռչող սկաւառակներ կարող էին լինել: Մարդկային յիշողութեան մի պատահարի եղելութիւնն է այն, որին շատ վաղ ժամանակներին ակնատես պիտի լինէին: Նրանք, սերունդներին փոխանցելու նպատակով էին այդ բոլորը քարերին փորագրել: Քարերի այդ փորագրութիւնները կարող էին այլ մոլորակներից եկած այցելուների պատկերները լինել: Կարո՞ղ էր Քարահունչը օգտագործել էին որպէս վայրէջքի վայր: Հայկական Քարահունչը միայն վերջին տասնամեակներին է համաշխարհային հետաքրքրութեան առարկա դարձել: Մեծամօրի աստղադիտարանը, Քարահունչը՝ աշխարհում ճանաչուած են որպէս առաջին աստղադիտարաններ: Մեծամօրը, Քրիստոսից 5000 տարի առաջ, իր դիրքի դասաւորութիւնը ուղղել էր դէպի Սիրիոս աստղը: Քարահունչը իր քարէ անցքի «հեռադիտակը» դէպի «Կարապ»-ի համաստեղութիւնն էր ուղղել նոյնպէս Քրիստոսից 5000 տարիներ առաջ: Քարահունչը կանխում է Անգլիական ու Ֆրանսիական նոյնանման կառուցները եւ հազար ու աւելի տարիների առաջուայ Բաբելոնեան ու Շումեր-սումերների աստղագէտների իմացութիւնը:

Բորիս Հերոնի, աշխարհում առաջին Ռադիոպտիկական հեռադիտակի ստեղծողը, Քարահունչի կառուցը բացառապէս էր՝ որպէս աստղադիտարան լինելու իրողութիւն եւ նրա կապը այլ մոլորակների ու արտերկրային այցելուների հետ: Բիւրականի աստղադիտարանի աստղաբանագէտ՝ Էլմա Բարսամեան, տասնամեակներով պեղումներ կատարել Մեծամօրում, բացառապէս նրա հնամենի աստղադիտարան լինելու հանգամանքը: Նրանց յարատեւ հրապարակումների ու դասախօսութիւնների շնորհիւ՝ Եւրոպացի ու Հայ աստղագէտները տեղակայուել են այդ երկու հնամենի աստղադիտարանների մասին:

Արմիններն էին, առաջին անգամ հետազօտել երկրագունդի կեանքի կապը երկնային մարմինների հետ: Նախնի Արմին աստղագէտներն էին առաջինն ըմբռնել «ժամանակ» հասկացողութիւնը, մոլորակների շարժումները արեւի շուրջ, ստեղծել «Zodiac-կենդանակերպ»-ը: Յաղթանակի ու պատերազմի աստուած՝ Վահագն էր, 12 զազանիկների հետ կուռի գնացել ջրերի աղբիւրը փակած Վիշապի դէմ, սպանել նրան, «Վիշապաքաղ Վահագն» ջուր հոսել երկրին: Ժամանակը բաժանել են տարիների, ամիսների, օրերի, ժամերի: Աստղերն օգտագործել են երկրային ու երկնային նաւարկութիւնների համար: Նրանք հասկացել էին, որ երկիրը ու արեւը կլորակ են: Քարերի վրայ պատկերել են արեւը եւ արեւի-մարդիկ՝ արեւորդինե-

րին: Արմինա-Հայկական բարձրաւանդակը՝ մարդկութեան ծնունդի վայրն է, մարդկութեան քաղաքակրթութեան օրրանը: Արմին-հայերի աստուածները ինչ որ տուել են իրենց, ամէնը բաշխել են աշխարհին, Արմին-հայերի արարչական արիւնտվ երկիր բերել թշնամու զաւթած մի կտոր հայրենի հող, հիմա էլ աշխարհն ասում է բարբարոս եկուորներին է այն պատկանում: Նորէն արարչական արիւն պիտի հոսի, որ գնանք հասնենք մինչեւ Անուշ Արտաշէս արքայի երկրի ջրերի ափեր, որտեղից արծուային թռիչքով անցել էր միւս ափ՝ տուն բերել թագուհի:

Այո, Արմինները աշխարհին տուին այն՝ ինչ որ Արա-Արարիչ աստուածն էր իրենց շնորհել: Տուին հողը մշակելու երկրագործութեան հմտութիւն, ազատութեան մէջ թափառող կենդանիներին ընտելացնելու, քարերից մետաղ ձուլելու արհեստավարժութիւնները, տարբեր գիտութիւնների, ուսողութեան, աստղագիտութեան մասին գիտելիքներ, ամենակարեւորը՝ մարդկութեանը մայր լեզու: Արմինների Արա արարիչ աստուածը՝ մարդկութեան սերմը պահպանեց իրենց բարձրաւանդակում: Արմին-Հայ մայրեր, իրենց արարչական առաքելութեամբ, շատ-շատ զաւակներ ծնեցին, դարձեալ շատացան, գնացին հեռու աշխարհներ, իրենց հետ տարին բարձրաւանդակում արարուած քաղաքակրթութիւնը: Հասան նաեւ Միջագետք, տեղի բնակիչները հաւատում էին, որ նրանց յատուկ մի դասակարգ՝ «Խալդիաններ», աստղերի գաղտնիքներն են պահում: Այդ «Խալդիաններ»-ը Արմին-Հայ «Հայկեաններ» ն էին: Բարիս իմաստունը, իր՝ «Արմինականները (Armenoid) նախապատմական ժամանակներում» գրքում գրել է. «Մօտաւորապէս 15000 տարիներ առաջ, երկրագունդի մարդկանց կեանքում սկսել են հական փոփոխութիւններ տեղի ունենալ: Նրանց մնայուն բնակութեան վայրերում քարէ անօթներ են յայտնաբերուել, երկրագործութեան ու անասնապահութեան բնագաւառներում առաջխաղացում տեղի ունեցել: Այդ բոլոր անցքերը մաս են կազմել «Նոր Քարէ Դարի Յեղափոխութիւն» ժամանակաշրջանին: Նոր Քարէ Դար»-ի ժամանակներից սկսած առաջին մետաղագործական կեդրոնների մարդաբանական հետազօտութիւնները տալիս են միայն մի ուղղութեան յստակ ու պարզ պատկերացումը: «Նոր Քարէ Դար»-ի ու յետագայ ժամանակաշրջանների մշակութային յեղափոխութեան կայուն ընթացքի տարբերն են որոշել նրա շարունակականութիւնը, որը վաղ Արմինականների էութեան դրսեւորումն էր այն: Ամենախոր հնադարում, (հաւանաբար սկսած մ.թ.ա. 11000 տարիներին) Արմինականները կազմում էին բարձրագոյն մի դասակարգ, առնուազն կեդրոնական մասը Միջարեւելեան մշակութային շրջանակի: Նրանց տարածումը գլխաւորապէս համընկել էր այդ շրջանների պատմական ընթացքի հետ: «Մարդկային նախապատմութիւնը ուսումնասիրելը երեւան է հանում Արմինականների համաշխարհային դիմագիծը: «Նոր Քարէ Դար»-ի դարաշրջանից՝ մ.թ.ա. 11000 տարիներ առաջ, նրանք հաստատապէս երեւացել են գլխաւոր անցքերի կեդրոնում, որը որոշել է մարդկային քաղաքակրթութեան եղափոխութեան ընթացքը»:

### ՍԵՐԸ ՈՒՆԻ ԸՆԴԱՄԵՆԸ 5 ԱՍՏԻՃԱՆ ԲԱՅՑ ՇԱՏԵՐԸ ԿԱՆԳ Կ'ԱՌՆԵՆ 3-ՐԴԻՆ ԿՐԱՅ

«Կարծես թէ ինձի համապատասխան չէր»: Այս արտայայտությունը թիւնը մենք յաճախ կը լսենք՝ իբրեւ անսպասելի բաժանման արդարացում: Երբեմն անհասկնալի է, թէ ինչու կը չքանայ իրական սէրը: Ըստ հոգեբաններու կատարած հետազոտութիւններուն՝ մարդոց մեծ մասը, իրականութեան մէջ չի գտներ «իր» մարդը: Անոնք պարզապէս չեն դիմանար յարաբերութիւններու 5 աստիճաններուն՝ կանգ առնելով երրորդին վրայ:

1. Սիրահար Լաճութիւն: Ասի կա այն աստիճանն է, ուր մեր ուղեղը «թմրած է» երջանկութեան հորմոնով: Իսկ ձեր գուզընկերը պարզապէս իտէ ա լ ա կ ա ն մարդ է՝ առանց որեւէ թերութեան: Դուք կը կարծէք, թէ ան միշտ պիտի կատարէ ձեր բոլոր ցանկութիւնները, կը հաւատաք անոր ըսած իւրաքանչիւր բառին եւ կ'երազէք յաւերժ սիրոյ մասին՝ ըստ էութեան մերժելով բոլորին կասկածները:

2. Յարաբերութիւններու օրինական սկիզբ: Այս շրջանին սէրը աւելի ուժեղ կը դառնայ, եւ հանդիպումներուն կը փոխարինէ համատեղ ապրուստը: Իրարու աւելի լաւ կը ճանչնաք, կը սկսիք ազդեցութիւն ունենալ գուզընկերոջ կեանքի բոլոր ոլորտներուն վրայ: Ասիկա միաւորման եւ ուրախութեան ժամանակ է: Այս շրջանին հնարաւոր է երկար սպասուած երեխաներու ծնունդ, որ միայն կ'ամրացնէ կապերը: Դուք ձեզ պաշտպանուած, ցանկալի կը զգաք: Կ'ենթադրէք, որ իսկապէս գտած էք «ձեր» մարդը, որ ատիկա ճակատագիր է, եւ, որ երբեք չէք կասկածիր այդ կէտին:

### 5 ԲԱՆ, ՈՐ ՈՒԺԵՂ ԿԻՆԸ ԵՐԲԵՔ Զ'ԸՆԵՐ ՅԱՆՈՒՆ ՏՂԱՄԱՐԴՈՒ

1. Ձի փոխեր արտաքինը. Եթէ ձեր ընկերը հասուն մարդ է, ուստի երբեք ձեզի չի ստիպեր փոխել ձեր արտաքին տեսքը: Ան պէտք է սիրէ ձեզ այնպէս ինչպէս որ էք եւ ամբողջովին: Եթէ անոր համար հաճելի չեն ձեր մազերը, կշիռը կամ ոճը, կը նշանակէ՝ ձեզի հանդէպ անոր զգացումները անկեղծ չեն: Մարմնական իւրաքանչիւր փոփոխութիւն պէտք է կատարէք միայն սեփական ցանկութեամբ, այլ ոչ թէ ոեւէ մէկուն համար կամ յանուն անոր ուշադրութեան:

2. Ձի գոհաբերեր իր հետաքրքրութիւնները. Ոչ ոք պէտք է կանգնի ձեր նպատակներու ճանապարհին: Ի վերջոյ՝ ատիկա ձեր կեանքն է, եւ ոչ ոք ձեզմէ շատ պիտի չափսոսայ չիրականացած երազանքներուն համար: Ձեր ընկերը պէտք է աջակցի ձեր ձգտումներուն, այլ ոչ թէ ստիպէ ընտրել անոնց ու իր միջեւ:

3. Ձի սպասեր անոր հաւանութեան. Ուժեղ կիներ կը խաղայ իր կանոններով, այլ ոչ թէ կը սպասէ տղամարդու հրամաններուն: Դուք պէտք է վճռական ըլլաք եւ ապրիք ձեր որոշումներով, այլ ոչ թէ

3. Հիասթափութիւն: Այս շրջանին կը փլին բոլոր յոյսերը: Կ'առաջանայ զգացողութիւն, թէ զգացումները անվերադարձ կը մարին, գուզընկերը կը դառնայ պարզապէս կանխատեսելի, իսկ անոր վարքը կը սկսի նեղացնել: Կ'ուզէք յարաբերութիւնները ընդմիջել կամ ընդհանրապէս ընդունիլ, որ ան «ձերը» չէր: Ինչու՞ տանջես դուն քեզ մարդու մը հետ, որուն հետ շրջան մը լաւ էր:

4. Ժգնաժամի յաղթահարում եւ անցում մեծ սիրոյ: Եթէ դուք աչքերը փակ համոզուածութեամբ կ'անցնիք երրորդ շրջանը, կը ստանաք հետեւեալը՝ կը ջնջուին այն պատրանքները, որոնք արտացոլացած էք ձեր գուզընկերոջ վրայ: Ձեր առջեւ կը կանգնի ոչ թէ ան, որուն դուք կ'ուզէիք տեսնել ձեր կողքին, այլ իրական մարդը: Դուք կ'ընդունիք, իսկ, որ աւելի կարեւոր է, կը հասկնաք գուզընկերոջ թերութիւնները: Դուք կ'անցնիք, այս պէս կոչուած, մեծ սիրոյ:

5. Ձեր գուզընկերոջ իրական ուժին դիտակցումը: Հասկնալով, որ դուք սորված էք յաղթահարել ձեր տարածաշրջանները եւ գտած էք ձեր յարաբերութիւններուն խորքը, ամուր կապը, կը դիտակցիք, որ երկուքդ ալ ուժ ունիք՝ աշխարհի վրայ որեւէ բան փոխելու համար: Ոչ միայն միասին ապրիլ, այլեւս երկուքով ապրիլ որեւէ ընդհանուր գործի համար: Միասին աշխատիլ գրել, ստեղծագործել... ինչ ալ ըլլայ: Եւ երբ դուք սկսիք աշխատիլ եւ մտածել՝ իբրեւ մէկ ամբողջութիւն, յաղթահարելով բոլոր շրջանները, դուք արդէն կրնաք 100 տոկոսով ըսել՝ ան «իմ է»:

սպասէք անոր կողմէ գնահատականներու եւ հաւանութեան: Դուք բաւականաչափ հասուն էք, որպէսզի հասկնաք, թէ որն է ձեզի համար աւելի լաւ:

4. Ձի փոխեր իր ծրագրերնէրը. Բան մըն է՝ որեւէ շատ կարեւոր բանի պատճառով չեղարկել ծրագրերնէրը, բոլորովին այլ բան՝ ամէն ինչ յանուն անոր ձգելու, որպէսզի պարզապէս անոր հետ ըլլաք: Առաւել եւս՝ երբեք պէտք չէ գոհաբերել ընկերներն ու ընտանիքը անոր հետ հանդիպման համար: Դուք պէտք է անոր մօտ վազէք առաջին իսկ հեռաձայնով: Եթէ ան կը յարգէ ձեզ, ուստի դէմ չ'ըլլար յետաձգելու հանդիպումը:

5. Թոյլ չի տար տղամարդուն փոխել զինք. Երբեք մի՛ փոխուիք՝ յանուն ոեւէ մէկուն, բացի ձեզմէ: Եթէ որոշած էք որեւէ բան փոխել եւ յարմարիլ անոր, ատիկա պէտք է ըլլայ միայն այն, ինչ որ ձեզ աւելի լաւ կը դարձնէ: Եթէ ան պատրաստ է սիրել ձեզ միայն այն պարագային, եթէ դուք ընէք այս կամ այն բանը, ուրեմն անոր զգացումները անկեղծ չեն: Երբեք մի՛ կորսնցնէք ձեր եսը:

### ՆԻԹԱՓՈՒՆԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԱՐԱԳԱՑՆԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Մենք բոլորս կը սիրենք մէկ գաւաթ սուրճ խմել, առաւել եւս առաւօտեան: Սակայն ոչ բոլորը գիտեն, որ այս խմիչքը մարմնին կու տայ շարք մը առաւելութիւններ: Եթէ ձեզ պատրաստէք, ուստի ձեր առաւօտեան սուրճը կրնայ դառնալ նիւթափոխանակութիւնը արագացնող ու ճարպ այրող հզօր միջոց: Այն ամէնը, որ ձեզի անհրաժեշտ է՝ աւելցնել 3 բաղադրիչ, որոնք կ'օգնեն ձեզի նիւթափոխանակութիւնը:

Հնդկընկոյզի իւղ. Անիկա յագեցուածութեան զգացում կը պարզեւէ 5 ժամուան համար: Այդ պատճառով, անոր օգտագործման պարագային կը բացառուին վնասակար ուտելիքները, որոնք կը վնասեն կառուցուածքին: Հնդկընկոյզի իւղին մէջ եղող օգտակար ճարպերը կը լիցքաւորեն ուղեղը եւ կը անուցանեն գայն:

### ՋԱՍՈՒՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Եթէ կիներու արտաքինին հարցով տղամարդոց պահանջները տարբեր են, ուստի շատ տղամարդիկ կանացի բնաւորութենէն եւ վարքագիծէն մօտաւորապէս նոյն բանը կ'ուզեն:

Չարածիութիւն - Տղամարդիկ իրենց էութեամբ աշխոյժ են, անոնք կը սիրեն խաղալ եւ հասնիլ իրենց ուզածին, բայց ատոր համար անոնց մշտապէս անհրաժեշտ է խթանիչ ուժ: Յաւօք, շատ կիներ այդ մասին չեն գիտեր կամ կը մոռնան: Անոնք կրնան տղամարդու հետ խօսիլ ամէն ինչի մասին, բայց հազուադէպ կրնան աչքերով ու ժեստերով խաղալ անոր հետ կամ ալ խաղալ բառի բուն իմաստով: Համատեղ խաղերը, օրինակ, սեղանի թենիսը կամ ձիւնագնդին երբեմն աւելի շատ կը մերձեցնեն մարդիկ, քան ժամեր շարունակ անցուցած զրոյցները: Ոմանց, ի հարկէ, չի խանգարեր համատեղել գանոնք: Գրեթէ այդքան ալ օգտակար է համատեղ մարզական մրցոյթները դիտելը, նոյնիսկ եթէ դուք տարբեր խումբերու կողմէ էք:

Անկախութիւն - Շատ կիներ սխալմամբ կ'ենթադրեն, որ տղամարդոց մեծ մասը կը նախընտրէ թոյլ կիներ, որոնց համեմատ՝ իրենք գիրենք աւելի ուժեղ եւ խելացի կը զգան: Նման տղամարդիկ, ի հարկէ, կան, բայց իսկապէս յաջողակ եւ ուժեղ տղամարդիկ կը փնտռեն գուզընկերուհի, որ պիտի ոգեշնչէ գիրենք, իսկ ատիկա կրնայ ընել միայն լիարժեք, վառ անհատականութիւնը, որուն համար յարաբերութիւնները կարեւոր են, սակայն կեանքի միակ նպատակը չեն: Իսկական տղամարդուն ուժեղ կիներ չի վախցնէր. ինքն իր մէջ բաւականաչափ ուժ ունի ուրիշի թու լու թեան հաշուին իրեն աւելի ուժեղ զգալու ցանկութիւնը յաղթահարելու համար: Նման տղամարդոց չեն հետաքրքրեր կիներ, որոնք պատրաստ են յանուն յարաբերութիւններու ձգել աշխատանքը, նախապիւրութիւնը, ընկերները: Այն, որ դուք անկախ էք, չի նշանակեր, որ ձեզի տղամարդ պէտք չէ: Ատիկա պարզապէս կը նշանակէ, որ դուք ձեզ լիարժեք եւ կայացած մարդ կը զգաք, եւ նման կիներն է, որ կրնայ իտէալական գուզընկեր ըլլալ կեանքի բոլոր ասպարէզներուն մէջ: Յուզական հասունութիւն: Երբ տղամարդու եւ կնոջ միջեւ յարաբերութիւններ կը սկսին, վաղ թէ ուշ

Մեղր. Մեղրը ոչ միայն կ'արագացնէ նիւթափոխանակութիւնը, այլեւ կը վերածնի հիւսկէնները, ունի հակա բորբոքային ազդեցութիւն: Անիկա նաեւ լաւ կը փոխարինէ քաղցրաւենիքը:

Կասիա. Այս համեմունքը կը բարելաւէ նիւթափոխանակութիւնը: Օգնելով նուազեցնելու շաքարի մակարդակը արեան մէջ՝ կասիան կը նպաստէ ճարպերու արագ քայքայման: Բաղադրիչներ. - 0,25 գաւաթ հնդկընկոյզի իւղ - 0,5 ձաշի դգալ մեղր - 1 թէյի դգալ կասիա - 1 թէյի դգալ քաքաօ: Պատրաստման եւ օգտագործման եղանակը. Խառնել բոլոր բաղադրիչները: Դնել ապակեայ անոթի մէջ եւ պահել սառնարանի մէջ: Ամէն առաւօտ, մէկ թէյի դգալ խառնուրդը աւելցնել թարմ եփուած սուրճի մէջ, խառնել եւ խմել:

անոնց միջեւ որոշ հարցերու մէջ թիւրմբունում կը ծագի: Եւ ատիկա բնական է: Նման իրավիճակի մէջ՝ յուզական առումով հասուն կիներ՝ տղամարդը չի մեղադրեր այն բանի համար, թէ ինչ կը զգայ ինքը, այլ հանգիստ եւ բացի ի բաց կ'արտայայտէ իր միտքերը, թէ ինչը իրեն հաճելի չէ տուեալ իրավիճակին մէջ: Առհասարակ այն, թէ ինչպէս կիներ կը կառավարէ իր յոյզերը, տղամարդու համար շատ կարեւոր չափանիշ է գուզընկերուհի ընտրութեան հարցով: Եթէ ան մշտապէս ազատութիւն կու տայ իր զգացումներուն, տղամարդու համար ատիկա ազդանշան է, որ այդ կնոջ հետ լուրջ յարաբերութիւններ չ'արժեք ստեղծել: Ինքնակառավարումը եւ ինդիւիդներ լուծելու ունակութիւնը՝ սառը դատողութիւնը պահպանելով հանդերձ, շատ գրաւիչ բնաւորութեան գիծ է տղամարդոց համար:

Կին, որ չի շտապեր անցնիլ մտերիմ շփման: Այսինքն մարմնական մտերմութեան: Որքան հասանելի է այդ մէկը, այնքան շատ տղամարդը կը գնահատէ կինը, որ իր տունը չ'երթար առաջին ժամադրութենէն յետոյ: Բանը որջախոհ կին գտնելու ցանկութեան մէջ չէ, այլ այն, որ կինը նուազեւ, ծանօթութեան եւ առաջին յարաբերութեան միջեւ ինկած ժամանակահատուածին ապրած սպասումը նոյնպէս մեծ հաճոյք կը պատճառէ, եւ տղամարդը չ'ուզեր ատէկ գրկուիլ: Բացի այդ, եթէ կինը չի շտապեր յարաբերութիւն ունենալ տղամարդու հետ, ատիկա կը վկայէ այն մասին, որ ան չի ձգտիր տղամարդը իրեն կապել բոլոր հնարաւոր միջոցներով, այսինքն՝ կինը գիտէ իր գինը, եւ անոր համար ունի բոլոր հիմքերը: Կինը, որ տղամարդուն անձնական տարածք կու տայ:

Տղամարդու տեսանկիւնէն իտէալական կինը անոր ժամանակ կու տայ ընկերներուն հետ պարբերաբար ժամանակ անցնելու համար (առանց իրեն), զբաղելու սեփական հետաքրքրութիւններով եւ այլն: Անգամ եթէ տղամարդը շատ կը սիրէ կինը, ան չ'ուզեր այդ կնոջ հետ անցնել իր ամբողջ ժամանակը, ամէն բան ընել միասին՝ չբաժնուելով ոչ մէկ վայրկեան: Ի հարկէ, ամէն պարագային ան չի հրաժարիր ընկերներէն եւ հետաքրքրութիւններէն, սակայն անոր համար հաճելի պիտի ըլլայ, եթէ կինը դէմ չ'ըլլայ ատոր: Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն





### ՌՈՆԱԼԴՈՒ. «ՎԵՐՋԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՍ ՉԷ, ԽԱՂԱԼՈՒ ԵՄ ՄԻՆՉԵՒ 41 ՏԱՐԵԿԱՆ»

Փորթուգալացի կրիշտիանու Ռոնալդոն նոր պայմանագիր է կնքել Մադրիդի «Ռեալի» հետ: 31-ամեայ ֆուտպոլիստն Արքայական ակումբում կը խաղայ մինչեւ 2021 թվականը:



«Կասկածներ չունէի «Ռեալում» մնալու եւ աշխարհի լաւագոյն ակումբի հետ պատմութիւնը շարունակելու վերաբերեալ: Յաղթանակը Չեմպիոնների լիգայում, Եւրոպայի ախոյեանութիւնը, «Ռեալի» հետ պայմանագրի երկարաձգումը՝ երազանք-տարի է: Ես երջանիկ եմ եւ ցանկանում եմ մնալ այստեղ, բայց սա չի լինի իմ վերջին պայմանագիրը ֆուտպոլում: Ցանկանում եմ խաղալ մինչեւ 41 տարեկան», - ասել է Ռոնալդոն պայմանագիրը կնքելուց յետոյ տեղի ունեցած ասուլիսում:

2009 թվականին 94 միլիոն եւրոյով «Մանչեսթեր Եունայթեդի» «Ռեալ» տեղափոխուած Ռոնալդոն Արքայական ակումբի կազմում մասնակցել է բոլոր մրցաշարերի 360 հանդիպման եւ խփել 371 կոլ:

### ՄԵՍԻԻ 500-ՐԴ ԿՈԼԸ «ԲԱՐՍԵԼՈՆԱՅԻ» ԹԻՄՈՒՄ

Սպանիայի առաջնութեան 11-րդ տուրում ախոյեան «Բարսելոնան» հիւրընկալուեց «Սելտիային» եւ տարաւ կամային յաղթանակ 2:1 հաշուով: Վիտորլոյի կողին հիւրերը պատասխանեցին Լիոնել Մեսսիի եւ Լուիս Սուարեսի դիպուկ հարուածներով:



Լիոնել Մեսսին խփեց իր 500-րդ կոլը (469-ը՝ պաշտօնական, 31-ը՝ ոչ պաշտօնական խաղերում) «Բարսելոնայում» եւ կատարական ակումբի բոլոր ժամանակների լաւագոյն ուժբարկուն է (2012 թվականից):

«Բարսելոնան» 25 միաւորով երկրորդ տեղում է եւ 2 միաւոր է զիջում առաջատար «Ռեալին»:

### ՄՈՒՐԻՆԻՕ. «ԽԱՂԱՅՈՂՆԵՐԸ ԶԱԲԱՏՈՒՄ ԵՆ ԻՆՁ»

«Մանչեսթեր Եունայթեդի» գլխաւոր մարզիչ Ժոզէ Մուրինիոն մեկնաբանել է «Սուոնսիի» նկատմամբ 3:1 հաշուով արտագնայ յաղթանակը ֆուտպոլի Անգլիայի առաջնութեան 11-րդ տուրում:

«Ես գոհ եմ: Այս 3 միաւորները պէտք էին մեզ: Խաղը հենց առաջին րոպէին հանգիստ ստացուեց մեզ համար: Կառավարում էինք հանդիպումը, պահպանեցինք կենտրոնացուածութիւնը եւ կատարեցինք խաղի ծրագիրը: Թիմը հիանալի խաղաց, եւ ես ուրախ եմ բոլոր խաղացողների համար:

Այս յաղթանակը հաւաքականների խաղերի համար ընդմիջման գնալու լաւագոյն միջոցն էր: Գիտէի, որ իբրահիմովիչն ընդհատելու է առանց գոլերի շարքը: Նա միշտ աշխատում է թիմի համար: Խաղացողները հաւատում են ինձ, իսկ ես՝ նրանց: Դա երբեք խնդիր չի եղել, մարզիչի խօսքը մէջբերում է BBC Sport-ը:

Յիշեցնենք, որ «Մանչեսթեր Եունայթեդի» յաղթել էր 3:1 հաշուով, իսկ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը չէր յայտաւորուել խաղին:

### ԿԱՐԵՆ ԱՂԱՄԱԼԵԱՆ.

#### «ԱՄԵՆԱՅՆ ԶԱԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ, ԱՅԼԵԻՍ ՉԵՄ ԳԼԽԱԴՈՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱԲԱՔԱԿԱՆԸ»

Բռնցքամարտի տղամարդկանց Հայաստանի հաւաքականի աշխատանքը ժամանակաւորապէս կասեցուած է, լինելու է ֆեդերացիայի համաժող, նշանակուելու է նոր մարզիչ:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում ասաց 2015թ. Դեկտեմբերի 10-ից բռնցքամարտի տղամարդկանց Հայաստանի թիմը գլխաւորած Կարէն Աղամալեանը:

NEWS.am Sport-ի տեղեկութիւններով հաւաքականի գլխաւոր մարզիչի պաշտօնին յաւակնում է բռնցքամարտի աշխարհի ախոյեան Իսրայէլ Յակոբկոխեանը:

Յիշեցնենք, որ Կարէն Աղամալեանը մարզչական կարիերայի ընթացքում երկրորդ անգամ է հնարաւորութիւն ստացել գլխաւորել հաւաքականը՝ 2012-ին եւ 2015-ին: Հաւաքականի գլխաւոր մարզիչի անունը կը յայտարարուի Դեկտեմբերին կայանալիք Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի համագումարում:

### ՊԱԿՅԱՈՆ ՆՈԿՂԱՌԻՆՈՎ ՅԱՂԹԵՑ ՎԱՐԳԱՍԻՆ ԵՒ ՆՈՒԱՃԵՑ WBO ՏԻՏՂՈՍԸ



Լեզենդար ֆիլիպինցի բռնցքամարտիկ Մենի Պակչանոն Լաս Վեկասում տեղի ունեցած մենամարտում յաղթել է ամերիկացի Ջեսի Վարգասին եւ նուաճել 66,7 կգ քաշային կարգում WBO վարկածով աշխարհի ախոյեանի տիտղոսը: Ութ քաշային կարգերում աշխարհի ախոյեանը յաղթել է միաւորներով՝ 114:116, 118:109, 118:109: Երկրորդ ռաունդում Պակչանոն նոկդաունի է ենթարկել Վարգասին: Մենամարտին դահլիճում հետեւել է ամերիկացի Ֆլոյդ Մեյվեզերը:

Ֆիլիպինցի սենատոր Պակչանոն կը ստանայ առնուազն 4 միլիոն տոլար: Վարգասը կը ստանայ 2,8 միլիոն տոլար: Այժմ Պակչանոն ունի 59 յաղթանակ, դրանցից 38-ը նոկաուտով: Նա պրոֆեսիոնալ ռինգում անցկացրել է 67 մենամարտ:

### ՖԻՖԱ-Ն ԶՐԱՊԱՐԱԿԵԼ Է ԼԱԻԱԳՈՅՆ ՖՈՒՏՊՈԼԻՍՏԻ ՅԱԲԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

ՖԻՖԱ-ն յայտարարել է 23 ֆուտպոլիստների անունները, ովքեր պայքարելու են տարուայ լաւագոյնի կոչման համար:

Ընդլայնուած ցուցակում ընդգրկուել են հետեւեալ ֆուտպոլիստները՝ Սերխիո Ագուերօ (Մանչեսթեր Սիթի, Արժենթինա), Լիոնել Մեսսի (Բարսելոնա, Արժենթինա), Գարեթ Բեյլ (Ռեալ Մադրիդ, Ուելս), Ջանլուիջի Բոլֆֆոն (Եուրենթուս, Իտալիա), Կեօլին դե Բրույնէ (Մանչեսթեր Սիթի, Պելդիա), Ջլատան Իբրահիմովիչ (Մանչեսթեր Եունայթեդ, Շվեդիա), Անդրեաս Ինիեստա (Բարսելոնա, Սպանիա), Անտուան Գրիգման (Ատլետիկո Մադրիդ, Ֆրանսա), Դիմիտրի Պալէ (Վեսթ Հեմ, Ֆրանսիա), Նիգոլո Կանտէ (Չելսի, Ֆրանսա), Ռիչարդ Մարեզ (Լեսթեր, Ալժիր), Տոնի Կրոս (Ռեալ Մադրիդ, Գերմանիա), Ռոբերտ Լեանդովսկի (Բաւարիա, Լեհաստան), Լուկա Մոդրիչ (Ռեալ Մադրիդ, Խորվաթիա), Մանուէլ Նոյցեր (Բաւարիա, Գերմանիա), Նեյմար (Բարսելոնա, Պրագիլիա), Մեսութ Օզիլ (Արսենալ, Գերմանիա), Պոլ Պոզբա (Մանչեսթեր Եունայթեդ, Ֆրանսիա), Սերխիօ Ռամոս (Ռեալ Մադրիդ, Իսպանիա), Լուիս Սուարես (Բարսելոնա, Ուրուգուայ), Ջեյմի Վարդի (Լեսթեր, Անգլիա), Քրիշտիանու Ռոնալդու (Ռեալ Մադրիդ, Պորտուգալիա), Ալեքսիս Սանչես (Արսենալ, Չիլի):

Յիշեցնենք, որ միջոցառումը տեղի է ունենալու Յունուարի 9-ին: Այս մրցանակը նորից ուժի մէջ է մտել, քանի որ ՖԻՖԱ-ն դադարեցրել է Ֆրանսա Ֆուտպոլ պարբերականի հետ համագործակցութիւնը եւ այլեւս կապ չի ունենալու Ոսկէ Գնդակի հետ:

### ԵՆԴԻ ՄԱՐԵՅԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԱՇԽԱՐՀԻ ԱՈՒՋԻՆ ՈՒԿԵՏ

Օլիմպիական խաղերի ախոյեան Էնդի Մարեյը իր կարիերայի մէջ առաջին անգամ կը դառնայ աշխարհի առաջին ռակետ:



«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Փարիզում անցկացուող Մաստերս կարգի մրցաշարի կիսաեզրափակչում պէտք է մրցէին Մարեյը եւ Միլաշ Ռաոնիչը, սակայն վերջինս հրաժարուել է կորտ դուրս գալ: Այսպիսով՝ Մարեյը դուրս եկաւ Փարիզի մրցաշարի եզրափակիչ եւ ապահովեց իր համար աշխարհի առաջին ռակետի կոչումը:

Այս մրցաշարի քառորդ եզրափակչում պարտութիւն էր կրել դեռեւս գործող աշխարհի առաջին ռակետ Նովակ Ջոկովիչը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՂԻՒ ՇԱՄԱՐ)  
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ  
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
ՇՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** **Մարտ 21-Ապրիլ 19**  
 Քու զորութեանդ սահմանափակումները լաւ գիտես եւ սակայն կ'ուզես անելիւն ընել փաստելու համար կարողութիւններդ: Յամառօրէն կը կարչիս գաղափարներուդ եւ զանց կ'ուզես ընել բոլոր քեզի տրուած առիթները:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,18,20,29,35

**ՑՈՒԼ** **Ապրիլ 20-Մայիս 20**  
 Փոխանակ անձնական ճիգերդ թափելու գործատեղիդ մեծ ծրագրին, անելի լաւ կ'ըլլայ որ միասնական գործակցութեան հաւատաս: Մտքիդ մէջ բոլոր դրածներդ կարող եւ կատարել, եթէ լրջօրէն մտածես ու ծրագրես:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,8,14,24,26

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** **Մայիս 20-Յունիս 20**  
 Անցեալի սխալներդ ճանչնալէ անելի անդին երթալու եւ եւ խուսափելու համար զանոնք կրկնել: Ձգոյշ եղիր սխալ տեղեկութիւններէ, քանի որ հակամետ եւ շուտ խաբուելու: Շատ շուտով մեծ ուրախութեան լուր մը առնելով պիտի սփոփուիս:  
 Բախտաւոր թիւերդ են: 12,25,29,31,33

**ԽԵՑԳԵՏԻՆ** **Յունիս 21-Յուլիս 22**  
 Վերջերս քեզի անյոյս նկատող հարց մը շուտով փայլուն պիտի ըլլայ շատ մը խոստումներով: Շատ կը մտածես ուրիշներու բարօրութեան վրայ յաճախ մոռնալով թէ դուն ալ կարիքը ունիս խնամուելու եւ սիրուելու:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,13,27,32,35

**ԱՌԻԺ** **Յուլիս 23-Օգոստոս 22**  
 Դուն քու անձնական շահերդ եւ հետաքրքրութիւններդ մէկ կողմ ձգած, կը գործակցիս քեզմէ տկարներուն եւ կարօտեալներուն հետ: Երկար ճամբորդութեան մը կարիքը ունիս ձերբազատուելու կեանքիդ առօրեայ դժուարութիւններէն:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,11,22,25,34

**ԿՈՅՍ** **Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**  
 Մեծ փափաք մը ունիս անձնական գործը ունենալու եւ կեանքի ասպարեզին մէջ նետուելու: Եթէ հաշիւներդ լաւ ընես, մեծ դիւրիւթեամբ պիտի յաջողիս: Կենակիցդ առօրեայ կեանքիդ մէկ մեծ մասնիկը պէտք է դարձնես:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,26,28,31,32

**ԿՇԻՈՔ** **Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**  
 Շատ մեծ խանդավառութիւն պիտի տեսնես գործատեղիդ ներս երբ գործ մը պիտի յաջողի քու պատճառաւ: Գործակիցներուդ պիտի գերազանցես եւ պիտի գնահատուիս: Հաւաքոյք մը կազմակերպելու ծրագիրը քեզ շատ կը վողովէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 13,24,27,33,35

**ԿԱՐԻՃ** **Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**  
 Այս օրերուն զգուշացիր կեանքիդ մեծագոյն սխալը ընելէ որպէսզի միջնա կեանքիդ վերջը հետեւանքէն չտանջուիս: Դուն որ անհամար մարտահրաւերներ կը դիմագրաւես, անձի մը սպառնալիքը արգելք պիտի ըլլայ ուրախութեանդ:  
 Բախտաւոր թիւերդ են: 7,16,24,28,32

**ԱՂԵՂՆԱԲՈՐ** **Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21**  
 Ընտրութիւններդ իմաստութեամբ կատարէ որ չզղջաս: Արտասովոր տաղանդի տէր անձ մըն եւ եւ շիտակ անձերը ընտրած եւ որպէս կեանքիդ մաս կազմողներ: Անհամբեր լուրի մը կը սպասես եւ շատ խանդավառ եւ գալիքով:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,14,17,23,34

**ԱՅԾԵՂՁԻՐ** **Դեկտեմբեր 22-Յունուար 19**  
 Շատ լաւ կը զգացնես դիմացիներդ երբ անձնապէս եւ մտերմաբար կը մօտենաս անոնց եւ խօսակցիս հետերմին: Գործիդ նոր ասպարեզը յաջողութեամբ պիտի շարունակուի, սակայն երկար ժամեր պիտի խլէ քեզմէ: Յարգանքով մօտեցիր տարեցներուն:  
 Բախտաւոր թիւերդ են: 17,21,25,31,32

**ԾՈՎԱՆՈՅՇ** **Յունուար 20-Փետրուար 18**  
 Ճշմարտութիւն խօսիլը սովորութիւններուդ մեծ մասը կը կազմէ, սակայն պիտի ստիպուիս խախտելու այդ գկարգներդ ձերբազատուելու համար նեղ պարագայէ մը: Ակամայ մտածող եւ ընտանիքիդ եւ զաւակներուդ մասին եւ յօժարական ծառայող անոնց:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,5,25,28,34

**ԶՈՒԿ** **Փետրուար 19-Մարտ 20**  
 Դէպի ետ կեանքիդ նայելով՝ շատ ուրախ եւ ներկայ վիճակովդ: Աչքդ լաւ բաց շուրջիներուդ խօսքերուն եւ դիւրութեամբ գաղտնիքներդ մի յայտնաբերեր: Բոլորին զարմանք կը պատճառես երբ խօսելու սկսիս ընտանիքիդ մասին:  
 Բախտաւոր թիւերդ են: 7,17,25,30,31

### ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԺՈՂՈՎԸ

Շարունակուած էջ 7-էն

րի դոկտոր, պրոֆէսոր տիար Գէորգ Գանիէլեանը: Յօդուած առ յօդուած քննելով փաստաթղթի նախագիծը՝ Գերագոյն հոգեւոր խորհուրդը կատարեց իր դիտարկումները եւ թելադրեց անհրաժեշտ սրբագրումներին չհետնադի վերջնական տարբերակը ներկայացնել Գերագոյն հոգեւոր խորհրդին, ապա վեհափառ Հայրապետի օրհնութեամբ նաեւ առաքել թեմեր:

ԳՀԽ անդամներն իրենց գնահատանքը յայտնեցին յանձնախմբին կատարուած մանրակրկիտ աշխատանքի համար:

Ժողովին քննարկուեց նաեւ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգութեան խնդիրը: Այս առնչութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ԳՀԽ անդամներին յայտնեց, որ նախագծային փուլն աւարտուել է եւ շուտով կը ձեռնարկուեն շինարարական աշխատանքները: Նորին Սրբութիւնը նաեւ տեղեկացրեց, որ քայլեր են ձեռնարկուած շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ նիւթական միջոցների հայթայթման նպատակով:

Գործնականութեամբ ընդունելով ծանուցումը Մայր Տաճարի ամրակայման եւ հիմնանորոգութեան ընթացքի վերաբերեալ՝ ԳՀԽ անդամները վստահութիւն յայտնեցին, որ աշխարհասփիւռ հայ ժողովրդի զաւակներն աջակցութիւն կը ցուցաբերեն համայն հայութեան Սրբութիւն սրբոցի պահպանութեան գործին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր-կրթական հաստատութիւնների գործունէութեան մասին զեկոյց ներկայացրեց Գեհորգեան հոգեւոր ձեռնարանի գիտական աստիճանների շնորհման յանձնախմբի անդամ Գերաշնորհ Տ. Վահան եպիսկոպոս Յովհաննիսեանը: Սրբազանն անդրադարձ կատարեց վերջին տարիների ընթացքում հոգեւոր-կրթական հաստատութիւններում ուսումնառութեան մակարդակի բարձրացման ուղղութեամբ ձեռնարկուած քայլերին: Ուրախութեամբ արձանագրուեց, որ մէկ ամիս առաջ Գեհորգեան հոգեւոր ձեռնարանին շնորհուեց ասպիրանտական կրթութիւն տալու եւ աստուածաբանութեան ոլորտում գիտական աստիճաններ շնորհելու իրաւունք, ինչը եւս պիտի նպաստի եկեղեցականութեան պատրաստութեան մակարդակի բարձրացմանը: Խօսուեց նաեւ Քոյր Եկեղեցիների եւ արտերկրի տարբեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում իրենց բարձրագոյն կրթութիւնը շարունակող հոգեւորականութեան մասին:

Գերագոյն հոգեւոր խորհուրդը, գործնականութիւն յայտնելով կրթական ոլորտում արձանագրուած յաջողութիւնների կապակցութեամբ, երախտագիտութիւն յայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին հոգեւորականաց ապագայ սերնդի գիտական եւ հովուական պատրաստութեանը մեծ կարեւորութիւն ընծայելու համար: Գերագոյն հոգեւոր խորհուրդը գնահատաբար արձանագրեց այն համագործակցութիւնը, որ ձեւաւորուել է Մայր Աթոռի կառույցների եւ ՀՀ Կրթութեան եւ գիտութեան նախարարութեան միջեւ եւ պտղաբերում է զանազան ազգօգուտ ծրագրերով եւ համատեղ ձեռնարկներով:

Ժողովն ամփոփուեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեան խօսքով եւ աղօթքով:

### ՀԱՅԽ-Ի ԼԻԱՆԻՍԾ ԺՈՂՈՎԸ

Շարունակուած էջ 7-էն

պետութիւններուն՝ մաղթելով անոնց նոր նուաճումներով լի ցնծման տարիներ: ՀԱՀԽ-ը միանգամայն կը վերահաստատէ իր յանձնառութիւնը նեցուկ կենալու Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու անկախութեան պահպանումին եւ բարգաւաճումին»:

Ինչ կը վերաբերի Հայկազանութեան դժբախտ կացութեան մասին, ժողովը ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը.-

«Աւելի քան հինգ տարիներէ ի վեր Սուրիոյ քաղաքացիական պատերազմի հետեւանքով Հայկազանութեան կրած մարդկային եւ նիւթական կորուստները մեծ ցաւ կը պատճառեն Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդին, որուն անդդուելի յանձնառութիւնն է վերաշինել մեր եկեղեցական եւ մշակութային կառույցները: Իսկ ինչ կը վերաբերի Սուրիահայկազան արտագաղթին, ՀԱՀԽ-ը

անգամ մը եւս կը վերահաստատէ իր յանձնառութիւնը օժանդակելու անոնց, որոնք որոշած են մնալ իրենց բնակած վայրերուն, մէջ կամ որոշած են գաղթել Հայաստան:

Մինչ այդ մեր աղօթքը այն է որ Աստուած խաղաղութիւն շնորհէ տագնապալի Միջին Արեւելքի երկիրներուն, յատկապէս Սուրիոյ եւ Հայկազան գաղութի մեր սիրելի հայրենակիցներուն»:

6. Դիւանի Ընտրութիւն: Խորհուրդի երկամեայ ընտրութիւնը տեղի ունեցաւ եւ հետեւեալ անձերը ընտրուեցան 2017-2018 տարեշրջանի համար.- Վեր. Պերճ Ճամպազեան՝ Նախագահ, Վեր. Ժօէլ Միքայէլեան՝ Փոխ-նախագահ՝ Վեր. Մկրտիչ Գարակէօզեան՝ Ատենադպիր, Դոկտ. Նուրհան Հելվասեան՝ Գանձապահ, եւ Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիկեան՝ Գործադիր Տնօրէն:

Վեր. Վահան Յ. Թութիկեան Գործադիր Տնօրէն, ՀԱՀԽ-ի

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave Pasadena, CA 91104  
 Գրասենեակները վերանորոգուած  
 եւ յարմար վարձքերով  
 հեռաձայնել՝ (626) 398-0506

ՄԱՐԱԶԴ



ՌՕԶԻՆ ՊԱՊԱՅԵԱՆ  
Ծնեալ Ապրիլ 4, 1921-ին, Հալեպ, Սուրիա

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, մօրաքրոջ, հօրաքրոջ, եւ հարազատին՝ Ռօզին Պապայեանի մահը, որ պատահեցաւ Շաբաթ, Հոկտեմբեր 29, 2016-ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 12, 2016, առաւօտեան ժամը 9:00-ին, Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Old North Church մատրան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝  
 Զաւակները՝ Տոքթ. եւ Փրոֆ. Սարգիս եւ Սիլվա Գարայեան  
 Տէր եւ Տիկ. Ներսէս եւ Հերմին Պապայեան  
 Տէր եւ Տիկ. Արա եւ Սոնիա Պապայեան  
 Թոռները՝ Տոքթ. եւ Տիկ. Խաչիկ եւ Զելա Գարակէօզեան  
 Պրն. Երուանդ Ա. Պապայեան  
 Մեթր Երուանդ Ն. Պապայեան  
 Օրդ. Թալին Պապայեան  
 Դոկտ. եւ Տոքթ. Ալեքս եւ Թամար Պապայեան  
 Ծոռները՝ Թամար եւ Փաթիլ Գարակէօզեան  
 Նայիրի եւ Թաթիանա Պապայեան  
 Գրիսդօֆըր Պապայեան  
 Քրոջ գաւակները  
 Տէր եւ Տիկ. Հրայր եւ Աստղիկ Թէճիրեան եւ գաւակները  
 Տէր եւ Տիկ. Զօհրապ եւ Յասմիկ Թէճիրեան եւ գաւակները  
 Տաքրոջը գաւակները  
 Պրն. Խաչիկ Պապայեան  
 Տէր եւ Տիկ. Իշխան եւ Լենա ձինպաշեան  
 Եղբօր գաւակները  
 Տէր եւ Տիկ. Մկրտիչ եւ Մարիթան Ասլանեան եւ գաւակը  
 (Լիբանան)  
 Տէր եւ Տիկ. Ատուր եւ Սիրան Գապազեան եւ գաւակները  
 (Լիբանան)  
 Եղբօր Թոռնիկը  
 Տէր եւ Տիկ. Էտի եւ Թալին Ամրոյեան եւ գաւակները  
 եւ համայն Պապայեան, Գարայեան, Թէճիրեան, Գապազեան,  
 Ուստազարայեան, Պասմաճեան, Սալպաշեան, Սիւմպիլեան,  
 Գարակէօզեան, Իւթիւճեան, Պէլիքեան, Պարութճեան, Սարտարեան,  
 Տէմիրճեան, Գասապեան, Տիգրիճեան, Գազանճեան եւ համայն  
 հարազատներն ու բարեկամները:

\*\*\*

Հանգուցեալի յիշատակին, փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Սրբոց Առաքելոց Եկեղեցւոյ Երուանդ Պապայեան Շաբաթօրեայ Դպրոցին, Հայ Աթոռապետներու Մշակութային Միութեան եւ Արարատ Տարեցներու Տան:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Տիկ. Ռոզ Պապայեանի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորագրաց վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի գաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի տիկին Սոնա Գարսեւանեան եւ զաւակունք շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք մասնակից եղան իրենց ամուսնուն, հօր եւ մեծ հօր՝ Խաչիկ Գարսեւանեանի մահուան տխուր առիթով՝ այցելութեամբ, հեռաձայնով, ծաղիկեպսակով կամ փոխան ծաղիկեպսակի նուիրատուութեամբ եւ առ ի երախտագիտութիւն \$500 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

«ԱՅՍ ԵՄ ԵՍ ...»

Շարունակուած էջ 13-էն

ան կը խոստանայ հիւրասիրել իր... հիւրընկալները, բայց «Նիկոն մեր յիշողութեան մէջ մնաց «հանճարեղ» քեալլայով, որի ոչ տեսքը տեսանք, ոչ համը վայելեցինք:»

Մօ. Հենրիկ Անասեանի հայրենասիրական զգացումներուն պոռթկումն է «Արեւի Հոտը» պատմուածքը, ուր Արշակ Բունիաթեան ընտանիքը կարս կ'ապրէր: Օր ըստ օրէ կացութիւնը մտահոգիչ կը դառնար Թուրքիոյ մէջ: Հետեւաբար, Արշակ իր ընտանիքով, փախուստ տալով կարսէն, Երեւան կը հաստատուին: Արշակի կինը՝ Հոռոմսիմէն, որ լուացարարուհի էր, կը սկսի՝ այդ արհեստը արուեստի աստիճանին հասցնելով աշխատիլ: Հոռոմսիմէին համար, լուացքը դուրսը՝ արեւին տակ փռելով երբ չորցուի, ան «արեւին հոտը» կ'առնէր: Բունիաթեաններուն փեսան՝ համայնավար Վարդանը, որ Խորհրդային Հայաստանի մէջ կարեւոր պաշտօն մը կը վարէր, զոհ երթալով զրպարտութեան մը, գործէն եւ կուսակցութենէն կ'արտաքսուի եւ ընտանիքը, ստիպուած՝ Միացեալ Նահանգներ կը գաղթէ, ուր լուացքը թէ անոր չորացումը մեքենայացում էր: Հոռոմսիմէն սակայն, կը շարունակէ իր նոյն ձեւով լուացք ընել, սակայն այստեղ լուացքը «արեւին հոտը» չէր առնէր: «Գիտե՞ս թէ ինչու է տարբեր «արեւի հոտը», որովհետեւ, այստեղի ոչ միայն արեւն ու նրա ջերմութիւնն է տարբեր, այլեւ ջրերը, որն այնպէս չի մերժում արեւի ճառագայթներին, ինչպէս մերժում էր Հայաստանի արեւը Գառնու քաղցրահամ ջրին: Հայաստանի «արեւի հոտ»ին խառնուած էր մեր անմահական ջրի հոտը:» Այո, Միացեալ Նահանգներուն «արեւի հոտ»ը տարբեր է Հայաստանի «արեւի հոտ»էն, որովհետեւ Հայաստանը Հայրենիք է ...


«Լիլիթն ու իր կորսուած սէրը» պատմութիւնն է երիտասարդի մը, որ կը հանդիպի իր բոլոր քայլերուն հետեւող Լիլիթին, կը սիրէ զայն, ան ալ՝ զինք ... Եւ երիտասարդը Լիլիթը կը ներկայացնէ իր նկարիչ ընկերոջ: Օր մըն ալ, երբ ան նկարչին կ'այցելէ, հոն կը տեսնէ Լիլիթը՝ փորը ուռած, բոլորովին մերկ, կը նկարուի ... Այս պատմութիւնը կը նմանի այն իրական դէպքին, երբ նշանուած երիտասարդ մը, կը ստիպուի գործով երկարատեւ ճամբորդութեան մը երթալ, իր մտերիմ բարեկամէն կը խնդրէ հոգ տանիլ իր նշանածին: Ճամբորդութենէ վերադարձին, կը տեսնէ, որ իր մտերիմ ընկերը այնքան սրտազին «հոգ տարած է» իր նշանածին, որ ... ամուսնացած է անոր հետ:

«Ղարաբաղի իրական պատկերը» յօդուածը կը վերաբերի Խորհրդային կարգերուն օրով, աննկուն զարաբաղցի հայ, պատմաբան եւ գրող Բագրատ Ուլու-

բաբեան, որ փախուստ տալով ազերիներուն հալածանքներէն, եկած էր Հայաստան հաստատուած: Այսօր, Մօ. Հենրիկ Անասեանի այս յօդուածէն կը տեղեկանամ, թէ Բագրատ Ուլուբաբեան, Երեւանի մէջ, Անասեաններուն սուրը, Հենրիկի հօրը՝ անուանի պատմաբան եւ բանասէր Յակոբ Անասեանի օժանդակութեամբ, գաղտնի ժողովներ կը գումարէին, քննարկելով Ղարաբաղը Հայաստանին միացնելու հնարաւորութիւններուն մասին: Այդ առնչութեամբ, նկատի ունենալով, որ Խորհրդային կարգերուն տակ կարելի պիտի չըլլայ հետապնդել այդ հարցը, Յակոբ Անասեանի օգնութեամբ, նամակ մը կը գրէ եւ զայն արտասահման կը ղրկէ գաղտնօրէն, ուր ան կը հրատարակուի Միացեալ Նահանգներուն մէջ՝ «Արմենիա» եւ «Հայրենիք» թերթերուն մէջ: Մօ. Հենրիկ Անասեան իր այս հատորին մէջ կու տայ Բագրատ Ուլուբաբեանի այդ նամակը:

«Վարդգէս Պետրոսեանը փրկեց իմ պատիւը» յօդուածին մէջ, Մօ. Հենրիկ Անասեան ի յայտ կու գայ որպէս սկզբունքի տէր, արժանապատուութեան գիտակցութիւնը ունեցող, անկաշառ մտաւորական Մարդը՝ գլխազիր Մարդը: Դէպքը տեղի կ'ունենայ Խորհրդային Հայաստանի մէջ, երբ Մօ. Հենրիկ Անասեան թղթակցի է «Երեկոյան Երեւան» օրաթերթին, որուն խմբագիրը օր մըն ալ իրեն պաշտօն կու տայ շրջիլ Երեւանի ճաշարանները եւ այնտեղ երգերուած երգերուն եւ երգիչներուն մասին տեղեկանք մը գրել: Մօ. Հենրիկ Անասեան կը շրջի ճաշարաններէն եւ կը յայտնաբերէ, թէ այնտեղ երգուած երգերը անճաշակ, անհեթեթ երգեր են իսկ երգիչները՝ անտաղանդ, անորակ երգիչներ են: Եւ ըստ այնմ ալ կը գրէ իր յօդուածը: Խմբագիրը երբ տեղեկանայ յօդուածին բովանդակութեան, կը զզջայ այդ պաշտօնը Մօ. Հենրիկ Անասեանին յասնձնարարելուն համար, եւ կը ջանքս զայն տարածուող, որ հրաժարի զայն հրատարակելէ ... Այդ յօդուածին բովանդակութենէն տեղեկ կարգ մը պատասխանատու անձեր եւս կը ջանան կանխել անոր հրատարակութիւնը, իրեն նոյնիսկ մեծագումար կաշառք կ'առաջարկեն: Սակայն Մօ. Հենրիկ Անասեան իր դիրքերուն վրայ անխախտ կը մնայ եւ իր յօդուածը կը տանի «Գարուն» ամսագրին խմբագիր Վարդգէս Պետրոսեանին, որ կարգ մը փոքր յապաւումներ ընելէ ետք, կը հրատարակէ զայն՝ փրկելով պատիւը Մօ. Հենրիկ Անասեանի ...

Մօ. Հենրիկ Անասեանի այս վեցերորդ գիրքը, իր բովանդակութեամբ, բոլորովին տարբեր է նախորդ գիրքերէն: Այստեղ Մօ. Հենրիկ Անասեան կը յայտնուի որպէս աննկուն հրապարակագիր եւ անկեղծ պատմուածագիր: Վարձքը կատար, սիրելի Մաեստրօ...



**MEHER BABIAN, D.D.S.**  
 General Dentistry


---

1111 S. Glendale Avenue  
 Suite 206  
 Glendale, CA 91205

Tel: (818) 547-0884  
 Tel: (818) 547-1476

ARMENIA FUND'S 19<sup>TH</sup> INTERNATIONAL THANKSGIVING DAY

# November 24 Telethon 2016



# ARTSAKA

**LIVE BROADCAST COAST-TO-COAST | 10am-10pm PST**

**CENTRAL CALIFORNIA**  
KGMC OTA Ch. 43.6 & Ch. 13.1  
Comcast Xfinity Ch. 375  
Northland Ch 2 & Ch. 9  
Noor TV Ch. 31.7

**SOUTHERN CALIFORNIA**  
Armenian Channels & KVMD Network

**SAN FRANCISCO & BAY AREA**  
KTSF OTA Ch. 26.1 • DirecTV Ch. 26  
Dish Network Ch. 26 • Comcast Ch. 8  
AT&T U-verse Ch. 8

**Las Vegas**  
Cox Ch. 274

**12 HOUR LIVE WEBCAST AT [WWW.ARMENIAFUND.ORG](http://WWW.ARMENIAFUND.ORG)**

 [Facebook.com/ArmeniaFund](https://www.facebook.com/ArmeniaFund)

 [Twitter.com/ArmeniaFund](https://twitter.com/ArmeniaFund)

 [instagram.com/ArmeniaFund](https://www.instagram.com/ArmeniaFund)

 [YouTube.com/ArmeniaFundUS](https://www.youtube.com/ArmeniaFundUS)

**VISIT & DONATE:** [www.ArmeniaFund.org](http://www.ArmeniaFund.org) or Call: 1-800-888-8897



Designed by: Edin Dabovic